ԿՈՐՍՎԱԾ ՎԱՇՏԸ

«Պաշտպանենք զինվորների իրավունքները» ծրագիր
Շիրակի մարզ

Բանակում զինադադարից (1994թ. մայիսի 12) հետո մահացած, սպանված կամ ինքնասպանություն գործած զինվորների մատյան:

- Արխիվային փաստաթղթեր - 9 էջ
- Հոդվածներ - 103 էջ
- Առաջարկություններ - 122 էջ
- Ցուցակներ - 126 էջ

ԳՅՈՒՄՐԻ

«ՔԱՂԱՔԻ ԳՐԱՏՈՒՆ» 2012

Այս գրքում ի մի են բերվել եւ ամփոփվել Հայաստանի բանակում Շիրակի մարզից զորակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած այն զինվորականների մասին տեղեկությունները եւ ցուցակները, որոնք զանազան հանգամանքներում մահացել են. առողջական պատճառներ, սահմանային միջադեպեր, դիվերսիոն հարձակումներ, հրազենի եւ զինամթերքի սխալ օգտագործում, սպանություններ, ինքնասպանություններ, վթարներ եւ այլն:

Ջանքեր են ներդրվել գրքում ի մի բերելու հանրությանը հայտնի բոլոր դեպքերը, սակայն, զանազան պատճառներով, այս մատյանում բերված ցանկը ամբողջական համարել չի կարելի. այդպես էլ չի հաջողվել գտնել մի քանի զոհվածների հարազատներին՝ տեղեկությունները ճշտելու համար:

Այս հրատարակության եւ ամբողջ ծրագրի նպատակը հանրության եւ իշխանությունների ուշադրությունը խնդրին եւս մեկ անգամ հրավիրելն է, բանակային խնդիրների կարգավորման համար ավելի եռանդուն ջանքերի անհրաժեշտության շեշտադրումը, եւ հավաստիացումը, թե բանակային մահերի խնդիրը նոր չէ, այն շարունակաբար առկա է զինադադարից սկսած: Գիրքը նախատեսված է մասնագիտական շրջանակների եւ զոհերի մերձավորների համար:

Գիրքը լույս է ընծայվել «Պաշտպանենք զինվորների իրավունքները» ծրագրի շրջանակներում, Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (National Endowment for Democracy) օժանդակությամբ:

© 2012, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը 2011 թվի հոկտեմբերից մինչեւ 2012 թվի սեպտեմբերն իրականացրեց «Պաշտպանենք զինվորների իրավունքները» դրամաշնորհային ծրագիրը:

Ծրագիրն իրականացվում է ամերիկյան Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (National Endowment for Democracy) օժանդակությամբ:

Այս ծրագրի նպատակներից էր բացահայտել եւ համակարգել Շիրակի մարզից բանակ զորակոչված եւ այնտեղ մահացած զինվորների եւ զինվորականների մահվան պատմությունները, վերլուծել եւ համակարգել պատճառները, հրապարակայնություն ապահովել այդ ծավալուն ուսումնասիրության եւ բանակում տեղի ունեցած սպանությունների եւ ինքնասպանությունների մասին, ինչպես նաեւ այդ ուսումնասիրության եւ վերլուծությունների հիման վրա կազմել բանակում զինծառայողների ծառայության պայմանների բարելավման առաջարկություններ՝ ուղղված ՀՀ իշխանություններին:

Ծրագրի երկարաժամկետ ազդեցության ակնկալիքն այն է, որ բանակային ռեֆորմների վրա կգործի այնպիսի ազդեցություն, ինչի արդյունքում բանակում ոչ մարտական իրավիճակներում զինվորականների եւ զինվորների սպանությունների եւ ինքնասպանությունների թիվը կնվազի:

Կարիքի հիմնավորումը

Չնայած Հայաստանն արդեն 22 տարի է, ինչ ժողովրդավարացում է հայտարարել, երկիրը ժողովրդավարությունից մնում է բավականաչափ հեռու. բազմիցս խախտվում են մարդկանց խոսքի ազատության, տեղաշարժման, հանրահավաքների, կյանքի, աշխատանքի, արդար դատավարության եւ այլ իրավունքները: Ի տարբերություն հայաստանյան հասարակական կյանքի եւ իշխանությունների գործողությունների բազմաթիվ ոլորտների, որոնք հնարավոր է հասարակական մոնիտորինգի ենթարկել, Հայաստանի բանակը մնում է քաղաքացիական հասարակության կառույցների համար, համեմատաբար, նվազ մատչելի, որոշ դեպքերում՝ ուղղակի անմատչելի կառույց: Իշխանությունները բանակի ներսում տեղի ունեցող անօրինական փոխհարաբերությունները, զինվորների եւ սպաների սպանություններն ու ինքնասպանությունների դեպքերի դրդապատճառները ջանում են հնարավորինս փակ պահել հասարակությունից, հասարակական կազմակերպությունների մուտքը բանակ հնարավորինս սահմանափակել, իսկ ավելի շատ՝ արգելել, հաճախ այս արգելքները մեկնաբանելով այնպես, որ Հայաստանը շրջապատված է մի քանի թշնամի պետություններով, գտնվում է սառեցված կոնֆլիկտի գոտում ու բանակի ներսում տիրող կացության ուսումնասիրությունները եւ, մանավանդ, դրանց մասին հրապարակումներն ու քննադատությունները զինվորականների եւ իշխանությունների հասցեին, իբր, վտանգում են Հայաստանի ազգային անվտանգությունը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախնական դիտարկումների արդյունքում, որոնք արվել են ավելի քան 10 տարի շարունակ՝ ակումբի ստեղծման ժամանակներից, պարզվել է, որ ղարաբաղյան պատերազմի 1994 թվի մայիսի 12-ի հրադադարից հետո բանակում մահացել, սպանվել կամ ինքնասպանություն է գործել ավելի քան հազար զինվորական, հիմնականում ժամկետային զինծառայող զինվորներ, որոնք զորակոչվում են բանակ երկու տարով, ինչպես նաեւ՝ սպաներ, ենթասպաներ, որոնք պայմանագրային ծառայողներ են եղել: Միայն 2010 թվին Հայաստանի բանակում զոհվել է 54 զինծառայող, որոնցից 11-ը՝ ըստ պաշտոնական հաղորդագրությունների, զոհվել են Ադրբեջանի հետ ղարաբաղյան եւ հայաստանյան շփման գծում՝ զինված ուժերի հետ տեղային բախումների արդյունքում, նշանառուների կրակոցներից եւ դիվերսանտների գործողություններից: Մյուս 43 զինվորականները սպանվել են կամ ինքնասպանություն են գործել բանակում առկա փոխհարաբերությունների, ապօրինությունների, հանցագործությունների, բարոյահոգեբանական իրավիճակի պատճառով ծագած վեճերի, դժբախտ պատահարների արդյունքում:

Զինադադարից հետո Շիրակի մարզից բանակ զորակոչված եւ մահացած զինվորների եւ սպաների թիվը, զանազան տվյալներով գերազանցում է 100 հոգին: Ղարաբաղյան պատերազմի տարիներին Շիրակի մարզից, տարբեր տվյալներով, զոհվել է 118-150 հոգի: Խաղաղ պայմաններում՝ անցած 18 տարիներին բանակում մահացածների ընդհանուր թվի մասին չկա որեւէ պաշտոնական տեղեկություն: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբին եւ իրավապաշտպան մի շարք կազմակերպությունների հայտնի են բազմաթիվ գործեր, երբ բանակում սպանվածների կամ մահացածների հարազատները դատարաններում վիճարկել են սպանության կամ մահվան պատճառները, կամ չեն ընդունել այդ գործերով մեղադրված, դատված եւ դատապարտված անձանց մեղավորությունը եւ այլն: Պաշտոնական եզրակացությամբ՝ ինքնասպանություններ գործած զինվորականների ծնողները կամ հարազատները հիմնականում չեն ընդունում այդ պատճառը՝ որպես զինվորականի մահվան իրական պատճառ:

Խնդրի կարգավորման համար հարկավոր է տեղեկատվության, դեպքերի դասակարգման, պատճառների ուսումնասիրման, վերլուծությունների, հանրային իրազեկման եւ իշխանություններին այսօրինակ ուսումնասիրությունների հիման վրա համակարգային փոփոխությունների առաջարկ ներկայացնել: Խնդիրը մտահոգում է շատերին եւ մանրամասն ուսումնասիրման, վերլուծման, եւ լուծման կոնկրետ առաջարկությունների կարիք ունի: Միայն այս դեպքերի համակողմանի ուսումնասիրությունն ու դրանցից քաղված դասերը կարող են դառնալ հրապարակայնության հիման վրա ամրապնդվող ազգային անվտանգության բաղադրիչ:

Ծրագրի հեռահար նպատակը.

Հետազոտական, հանրային իրազեկման, եւ շահերի պաշտպանության հնարավոր գործիքների միջոցով հասնել նրան, որ բանակում զինվորականների սպանությունների, ինքնասպանությունների եւ մահվան դեպքերը նվազեն:

Ծրագրային գործողությունները.

1. Հավաքել Շիրակի մարզից բանակում 1994 թվի մայիսի 12-ից մինչեւ ծրագրի իրականացման պահը սպանված, մահացած կամ ինքնասպանություն գործած բոլոր զինվորների եւ զինվորականների մասին բոլոր հնարավոր տեղեկությունները. բերանացի վկայություններ, մահվան մասին տեղեկություններ, դատական եւ այլ փաստաթղթեր, լուսանկարներ, գծագրեր, նկարագրեր: Յուրաքանչյուր մահացածի կամ սպանվածի մասին կազմել առանձին գործ՝ թղթապանակ, իսկ համակարգչում ունենալ դրա էլեկտրոնային տարբերակը:

Տեղեկատվության հավաքման համար օգտագործվել են հետեւյալ գործիքները.

- Հայտարարություններ տեղական հեռուստաընկերությունների եւ ռադիոկայանների միջոցով, որոնցով իրազեկվել է, որ բանակում սպանվածների ընտանիքների անդամները կարող են դիմել Ակումբ՝ ակումբի մասնագետների այցելությունները կազմակերպելու համար:

- Իրավապաշտպան ՀԿ-ներից, իրավաբաններից եւ փաստաբաններից հավաքվել են իրենց ունեցած տեղեկությունները՝ տուժածների ընտանիքների եւ դեպքերի մասին:

- Պետական եւ պաշտոնական ատյաններին հղվել են տեղեկության հարցումներ՝ տուժածների թիվը եւ հասցեները իմանալու համար:

- Ծրագրի իրավաբաններն ու նրանց օգնականները այցելություններ են իրականացրել Շիրակի մարզի բոլոր 119 համայնքներ, համայնքի տարեցների, ակտիվ բնակիչների հետ հանդիպումների եւ նրանցից նախնական տեղեկություններ ստանալու համար: Ապա իրականացվել են հիմնական այցելությունները՝ բանակում սպանվածների ընտանիքներ: Որոշ դեպքերում իրավաբանները նրանց ընդունել են ակումբում: Այս հանդիպումների ընթացքում հավաքվել են ծրագրի հիմնական տեղեկությունները, որոնք են.

- Բանակում սպանության, մահվան կամ ինքնասպանության դեպքերի ժամկետները, հանգուցյալի անուն-ազգանունը, հասցեն:

- Մահվան ժամանակի, վայրի, պատճառի պաշտոնական նկարագիրը, որ հաղորդվել է ազգականին:

- Մահվան ժամանակի, վայրի, պատճառի ոչ պաշտոնական նկարագիրը, որ ունի ազգականը, եթե համաձայն չէ պաշտոնական վարկածի հետ:

- Զինվորականի մահվանն առնչվող բոլոր առկա փաստաթղթերի, նկարների, լուսանկարների պատճենները:

- Կոնկրետ դեպքի հետ հնարավոր առնչություն ունեցած պաշտոնական հետաքննության, դատական գործի նյութերի պատճենները, եթե այդպիսիք կան:

- ԶԼՄ հրապարակումները կոնկրետ դեպքի մասին, եթե դրանք կան ազգականների մոտ կամ համացանցում:

Համակարգվել եւ դասակարգվել են ստացված տեղեկությունները՝ ըստ մահվան տեսակների, ժամանակների, զինվորականների ազգանունների այբբենական կարգի, պաշտոնական եւ ոչ պաշտոնական վարկածների, ժամանակագրության, աշխարհագրության, տուժածների զինվորական, սոցիալական կարգավիճակների եւ այլն: Կազմվել են հատուկ աղյուսակներ, մատյաններ:

Այս հետազոտության արդյունքում ստացվել են 2000 էջից ավել փաստաթղթեր, որոնց մեծ մասը զետեղվել է «Ասպարեզ» ակումբի www.asparez.am կայքում. http://www.asparez.am/project/soldiers-rights/

Ծրագրի ընթացքում մանրամասնությամբ ուսումնասիրվել է 90 դեպք, որոնք բոլորը ներկայացված են այս մատյանում: Միաժամանակ, տարբեր տեղեկություններով, միայն Գյումրի քաղաքից զոհվածների թիվը զինադադարի տարիներին կազմում է 125 հոգի, սակայն, մի քանի տասնյակ ընտանիքների հասցեներով իրավաբանների որոնումները արդյունք չեն տվել, վերջինները կամ փոխել են իրենց բնակության վայրերը, կամ արտագաղթել: Այստեղ զետեղված բոլոր տեղեկությունները հրապարակվում են զոհվածների հարազատների համաձայնությամբ: Միայն երեք դեպքի մասին զոհվածների հարազատները տեղեկությունները հաղորդելու հետ մեկտեղ խնդրել են դրանք չհրապարակել, այդ տեղեկությունները տեղ չեն գտել ոչ այս գրքում, ոչ էլ կայքում:

Չնայած ծրագրի պաշտոնական ավարտին, «Ասպարեզ» ակումբը շարունակելու է իր ուսումնասիրությունները եւ կայքի համապատասխան բաժինը շարունակ լրացվելու է նոր տեղեկություններով: Լրացուցիչ տեղեկություններ ունեցողներին խնդրվում է տեղեկացնել Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի իրավաբաններին՝ +374 312 50622 հեռախոսահամարով:

Ծրագրի իրականացման արդյունքում ստացված աղյուսակը PDF ձեւաչափով այստեղ է.

http://www.asparez.am/wp-content/uploads/2012/07/Zohvats-zinvorakanner-Shrak-12.05.1994-19.10.2012.pdf

Ծրագրի իրականացման արդյունքում ստացված աղյուսակը դասակարգման ակտիվ կարգավորմամբ այստեղ է.

http://www.asparez.am/shirakactive/base.html

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս մատյանում զետեղվել են հետեւյալ տեղեկությունները

Հայաստանի բանակում Շիրակի մարզից զինակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած եւ զինադադարի ընթացքում զոհված զինվորականների մասին տեղեկությունները եւ լուսանկարները 9

Հայաստանի բանակում Շիրակի մարզից զինակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած եւ զինադադարի ընթացքում զոհված զինվորականների մասին տեղեկությունների աղյուսակ .....

Խնդրի մասին հրապարակումներից քաղվածքներ 103

Խնդրի կարգավորմանն ուղղված եւ բարեփոխումների մասին առաջարկություններ.....121

Ծրագրի՝ տեղեկություններ հավաքելու հարցաթերթիկի օրինակը 126

Ծրագրի բյուջեն.....127

Հայաստանի բանակում Շիրակի մարզից զինակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած եւ զինադադարի ընթացքում զոհված զինվորականների մասին տեղեկությունները եւ լուսանկարները



ԱՐՄԵՆ ՄԻՇԱՅԻ ԻԳԻԹՅԱՆ

Ծնվել է 1981 թվականի սեպտեմբերի 3-ին՝ Գյումրիում: Բնակվել է Մուշ- 2 թաղ., 7/2շ., 26 բն. հասցեում: Արմեն Իգիթյանը, բանակ զորակոչվելիս ունեցել է բարձրագույն կրթություն, ապրել է ծնողների ու երկու եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ:

2003 թվականին Արմենը զորակոչվել է ՀՀ բանակ՝ Վազգեն Սարգսյանի անվան ինստիտուտից: Զորակոչվելիս որեւէ առողջական խնդիր չի ունեցել: Ծառայել է Գարեգինյանի զորամասում: Մահացել է 2005թ.-ի սեպտեմբերի 18-ին, Երեւան-Գյումրի ճանապարհին: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է ավտովթարը, որի հետ ծնողները համամիտ են: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ սպանվածի մոր՝ տիկին Հեղինեի՝ ընտանիքը պետության կողմից, որպես փոխհատուցում, ստացել է միանվագ 700.000 ՀՀ դրամ, ստանում է ամենամսյա 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 001:

ՍԵՐԳԵՅ ՀԱՅԿԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1981 թվականի հուլիսի 4-ին՝ Գյումրիում: Բնակվել է Մեծ Բերդ ԴՈՍ 92, բնակարան 8 հասցեում՝ ծնողների եւ քրոջ հետ: Բանակ զորակոչվելիս Սերգեյն ունեցել է բարձրագույն կրթություն: Ընտանիքի սոցիալական վիճակը բնորոշվել է նորմալ:

ՀՀ բանակ է զորակոչվել Գյումրու զինկոմիսարիատից՝ 1999 թվականի նոյեմբերի 7-ին՝ չի ունեցել առողջական որեւէ խնդիր:

Մահացել է 2000 թվականի սեպտեմբերի 6-ին՝ զորամասում: Մահվան պաշտոնական վարկածը ինքնասպանությունն է եղել: Քրեական օրենսգրքի 252 հոդվածի «գ» կետով եւ 258 հոդվածի «բ» կետով հարուցվել է քրեական գործ: Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճռի համաձայն՝ դատապարտյալները՝ Գեղամ Մնացականի Խաչատրյանը եւ Գրիգոր Ալբերտի Սարգսյանը, ենթարկվել են պատասխանատվության, համապատասխանաբար, Քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի «գ» եւ 258-րդ հոդվածի «բ» կետերով (Քր. Օրենսգրքի հիշյալ հոդվածները այնքան էլ չեն համապատասխանում ինքնասպանության վարկածին: Ամենայն հավանականությամբ, ինչ որ բան սխալ է): Մեղադրվողները դատապարտվել են 7-ական տարի ազատազրկման, ինչպես նաեւ՝ դատարանը որոշել է երկուսից միասին բռնագանձել 1 մլն դրամ: Դատաքննությունն ընթացել է Արարատի մարզի առաջին ատյանի դատարանում, հետագայում նաեւ ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանում: Վերաքննիչ դատարանում վճիռը մնացել է անփոփոխ:

Մոր՝ տիկին Ալվարդի փոխանցմամբ՝ ընտանիքը, որպես փոխհատուցում, ստացել է 8.000 դոլար միանվագ գումար, 30.000 ՀՀ դրամ փոխհատուցում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 002:



ԱՐԹՈՒՐ ԲԱԲԿԵՆԻ ԿՈՇՏՈՅԱՆ

Ծնվել է 1973 թվականի օգոստոսի 3-ին, Վրաստանում՝ Թբիլիսի քաղաքում: Զորակոչի ընթացքում նա հաշվառված է եղել Գյումրու թիվ 231 տնակում: Մինչեւ բանակ զորակոչվելը՝ Արթուրն ապրել է ծնողների, 2 քրոջ ու եղբոր հետ՝ սոցիալապես ծանր պայմաններում:

1993թ.-ի մայիսի 9-ին Գյումրու զինկոմիսարիատից նա զորակոչվել է բանակ՝ կիսատ թողնելով բարձրագույն կրթությունը: Զորակոչվելիս Արթուրը որեւէ առողջական խնդիր չի ունեցել: Սկզբնական շրջանում նա ծառայել է Գորիսում, մասնակցել զորավարժությունների, ապա ծառայությունը շարունակել ԼՂՀ-ում՝ Հորադիզում՝ ստանալով սերժանտի կոչում:

Ա.Կոշտոյանը մահացել է Հորադիզում՝ 1994 թվականի հուլիսի 7-ին, գիշերվա ժամը 2:00-ին: Մահը վրա է հասել ծառայողական պարտականությունները կատարելիս՝ ականի պայթյունից մարմնին հասցված վնասվածքից: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Կոշտոյանների ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից միանվագ ստացել է 50.000 ՀՀ դրամ, 10.000 ՀՀ դրամ փոխհատուցում եւ ամենամսյա թոշակ՝ 21.000 ՀՀ դրամի չափով:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 003:

ԱՐԹՈՒՐ ՀԱՅԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ծնվել է 1970 թվականի օգոստոսին՝ Լենինականում: Ապրել է Գյումրու Բարոնյան փողոց, 35 տուն հասցեում՝ ծնողների եւ եղբոր հետ: Զորակոչվելիս Արթուրն ունեցել է բարձրագույն կրթություն, ընտանիքի սոցիալական վիճակը, հարազատների բնորոշմամբ,՝ եղել է նորմալ:

Արթուր Բարսեղյանը ՀՀ բանակ է զորակոչվել 1994 թվականին (օր, ամիս մայրը չի հիշում)՝ Գյումրու զինկոմիսարիատից: Զորակոչվելիս որեւէ առողջական խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Մարտակերտում:

Արթուր Բարսեղյանը մահացել է 1995թ.-ի մայիսի 1-ին՝ մարտական գործողությունների ժամանակ: Մահվան պաշտոնական պատճառը տրավմատիկ, հեմոռագիկ շոկն է, գլխի եւ մարմնի բազմակի վնասվածքները՝ հրազենից: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Բարսեղյանների ընտանիքին տրվող միակ փոխհատուցումը ամենամսյա 30.000 ՀՀ դրամն է, որ ստանում են Գյումրու զինկոմիսարիատից:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 004:

ՀԱՄԼԵՏ ԷԼԲԱԿԻ ԱԴԼՅԱՆ

Ծնվել է 1985 թվականի օգոստոսի 9-ին՝ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղում: Ապրել է ծնողների եւ եղբոր հետ, ունեցել ութնամյա կրթություն: Բանակ զորակոչվելու ընթացքում Համլետի ընտանիքի սոցիալական վիճակը հոր՝ Էլբակ Ադլյանի գնահատմամբ, եղել է նորմալ:

Նա զորակոչվել է Արթիկի զինկոմիսարիատից՝ 2003 թվականի նոյեմբերի 13-ին, Փոքր Մանթաշ 9 փողոց, տուն 15 հասցեից: Ծառայել է ԼՂՀ թիվ 38862 զորամասում: Մահացել է ԼՂՀ-ի Տոնաշեն գյուղում: Մահվան պաշտոնական պատճառը հեմոռագիկ տրավմատիկ շոկն է՝ կրծքավանդակի հրազենային գնդակային միջանցիկ վնասվածքներով: Քրեական գործ չի հարուցվել: Ընտանիքը որեւէ դրամական փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 005:

ՄԱՄԻԿՈՆ ՄԵՆԹՈՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1977 թվականի դեկտեմբերի 27-ին՝ Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղում: Ապրել է գյուղում՝ ծնողների հետ: Մամիկոնն ունեցել է ութնամյա կրթություն: Ընտանիքը գտնվել է սոցիալապես նորմալ վիճակում:

1995 թվականի մայիսին նա Արթիկի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ՝ չունենալով առողջական որեւէ խնդիր: Մամիկոնը ծառայել է Լեռնային Ղարաբաղում՝ Հորադիզի զորամասում՝ որպես շարքային զինվոր:

Մահացել է Հորադիզում՝ 1997 թվականի մայիսի 11-ին, ըստ պաշտոնական վարկածի՝ ծառայողական պարտականությունները կատարելիս: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Դատավարությունն ընթացել է Կապանում՝ դատավոր Ա.Չիչոյանի նախագահությամբ: ՀՀ քր. օր.-ի 260-րդ հոդվածով մեղավոր է ճանաչվել Նորայր Սուրենի Գրիգորյանը, ով խախտելով ճանապարհային երթեւեկության կանոնները, «ԿԱՎԶ» մակնիշի ավտոմեքենան անսարք, ձեռքի արգելակով դուրս է բերել երթուղի: Ճանապարհին տեղի է ունեցել ավտովթար, որի պատճառով զոհվել է Մամիկոն Ավետիսյանը: Ծնողները համոզված են, որ ճիշտ մարդ է պատիժը կրել, սակայն չգիտեն՝ գործով կասկածյալները շարունակում են ծառայել ՀՀ բանակում, թե ոչ:

Սպանված զինվորի ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից միանվագ ստացել է 300.000 դրամ, հայրն ու մայրը շարունակում են ստանալ ամսական 15.000-ական դրամ՝ զինկոմից:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 006:

ՄԱՐՏԻՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

Ծնվել է 1961 թվականի մարտի 5-ին, Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղում: Բանակ զորակոչվելիս Մարտինն ունեցել է միջնակարգ կրթություն: Ապրել է ծնողների, կնոջ եւ երեխայի հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ:

1992 թվականի օգոստոսին Մարտին Վարդերեսյանը Արթիկի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Զորակոչվելիս առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է Քարվաճառի (Քելբաջար) տարածքում:

Մ.Վարդերեսյանը մահացել է 2004 թվականի մարտի 25-ին՝ Քելբաջարի զորամասերից մեկում: Մահվան պաշտոնական պատճառը մեխանիկական շնչահեղձումն է եղել եւ պարանոցի օրգանների օղով սեղմման հետեւանքով մարմնի ծանրության ուժի ազդեցությամբ սուր թթվածնային քաղցը: Մահվան այս վարկածի հետ ընտանիքի անդամները համամիտ չեն՝ պնդելով, որ Մարտինը մահացել է գլխին ստացած վնասվածքի հետեւանքով:

Մահվան առնչությամբ քրեական գործ չի հարուցվել, ընտանիքը պետության կողմից որեւէ փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 007:

ԿԱՐԵՆ ՀԵՆՐԻԿԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ծնվել է 1980 թվականի հունվարի 5-ին՝ Լենինականում: Բնակվել է Գյումրի, Կարեն Խաչատրյան փող., տուն 25 հասցեում՝ ծնողների եւ քրոջ հետ: Կարենն ունեցել է միջնակարգ կրթություն:

1998 թվականի մայիսին Գյումրու զինկոմիսարիատից նա զորակոչվել է ՀՀ բանակ, ֆիզիկապես առողջ է եղել: Ծառայել է ԼՂՀ-ում, Հադրութի զորամասում՝ որպես շարքային:

Մահացել է 1999թ.-ի հոկտեմբերի 11-ին, ժամը 17:30-ի սահմաններում, Հադրութի 1-ին դիտակետում՝ մարտական պարտականությունները կատարելիս: Սա մահվան պաշտոնական վարկածն է, որի հետ համամիտ չէ Կարենի հայրը՝ Հենրիկ Մալխասյանը: Ըստ նրա, կատարվածը դիտավորյալ սպանություն է, քանի որ հրամանատարի՝ Վաչիկ Ներսիսյանի պահանջած գումարը Կարենը չի տվել:

Հարուցված քրեական գործի արդյունքում, ՀՀ քր.օր-ի 259-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով մեղադրվել է Մխիթար Մաքսիմի Մկրտչյանը, սակայն սպանվածի հայրը համոզված է, որ արդար դատաքննություն չի եղել, օբյեկտիվ, ճիշտ քննություն չեն անցկացրել. «Դա եղել է դիտավորյալ, կանխորոշված սպանություն»,- ավելացրել է նա:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է մոտ հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 008:

ՄԻՀՐԱՆ ԱՐՄԵՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1992 թվականի սեպտեմբերի 20-ին, Գյումրիում: Բնակվել է Մանուշյան փող., 6ա շ., բն. 35 հասցեում: Ապրել է ծնողների եւ քրոջ հետ: Բանակ է զորակոչվել՝ կիսատ թողնելով ուսումը:

2010թ.-ի դեկտեմբերի 22-ին Միհրանը Գյումրու զինկոմիսարիատից մեկնել է ՀՀ բանակ, առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում, Մարտունի N զորամասում: Եղել է սերժանտ:

Մահացել է թշնամու գնդակից 2011թ.-ի նոյեմբերի 20-ին, առավոտյան ժամը 6-ին՝ դիրքերում, Մարտունի Կուրոպատկինո գյուղի մոտ: Մահվան առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից միանվագ օգնություն է ստացել, որի չափը չեն հիշում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 009:

ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1968 թվականի մայիսի 5-ին՝ Լենինականում: Սամվելը բանակ է մեկնել կամավոր: Ունեցել է բարձրագույն կրթություն, եղել է ամուսնացած: Ընտանիքը սոցիալապես նորմալ վիճակում է եղել:

Թիվ 55035 զորամասում աշխատել է որպես գնդի հրամանատարի տեղակալ: Մահացել է 2000 թվականի մարտի 11-ին Գյումրիում՝ քաղցկեղից:

ՀՀ պաշտպանության նախարարությունից Սամվել Թադեւոսյանի ընտանիքը ստացել է միանվագ օգնություն: Գումարի չափը ընտանիքի անդամները չեն հիշում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 010:



ՍԱՄՎԵԼ ԺՈՐԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1946 թվականի հունվարի 1-ին՝ Լենինականում: Բնակվել է Գյումրու Շիրակացի փողոցում՝ 61 զինվորական ավան, 7-րդ ԴՈՍ, 9-րդ բնակարանում: Բանակ զորակոչվելիս Սամվելն ամուսնացած է եղել, ապրել է կնոջ ու դստեր հետ:

1993թ.-ի ապրիլի 1-ին Գյումրու զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ՝ լինելով ֆիզիկապես առողջ եւ ունենալով բարձրագույն սպայական կրթություն: Որպես կապիտան՝ ծառայել է Գյումրու զորամասերից մեկում:

Մահացել է Գյումրիում, 1995 թվականի նոյեմբերի 25-ին: Մահվան պաշտոնական պատճառը գլխուղեղի կենսական կարեւոր ֆունկցիաների խանգարումն է եղել, ինչի կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրվել է դրամական փոխհատուցում, սակայն կինը՝ Օֆելյա Խաչատրյանը, գումարի չափը չի հիշում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 011:



ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆԻ ՄԵԼԻՔՅԱՆ

Ծնվել է 1984 թվականի դեկտեմբերի 30-ին՝ Գյումրիում: Բնակվել է Կնունյանց փող., տուն 10 հասցեում: Բանակ զորակոչվելիս Խաչատուրն ունեցել է միջնակարգ կրթություն, ապրել է ծնողների ու քրոջ հետ: Խաչատուրը եղել է մարզիկ, ունեցել մի շարք գովասանագրեր: Ընտանիքի սոցիալական վիճակը հարազատները գնահատել են նորմալ:

Խաչատուր Մելիքյանը բանակ է զորակոչվել 2003 թվականի մայիսի 10-ին՝ Գյումրու զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ զորամասում, եղել է կրտսեր սերժանտ:

Խաչատուրը մահացել է ԼՂՀ-ում՝ Դարբանդում, 2005 թվականի մարտի 15-ին, ժամը՝ 23:00-ի սահմաններում: Որպես մահվան պաշտոնական պատճառ՝ նշվում է զինծառայողի կողմից կատարված անզգույշ սպանությունը, սակայն հարազատները համամիտ չեն այդ վարկածի հետ: Համաձայն մոր պնդումների՝ որդուն դիտավորյալ սպանել է հրամանատարը:

Խաչատուրի մահվան առնչությամբ հարուցվել է քրեական գործ (N91001105): Գործում որպես մեղադրյալ ներգրավվել են ժամկետային զինծառայողներ Միշա Դոմիկյանն ու Դիլանյանը (անունը չի հիշում), հրամանատար՝ Սպարտակ Սահակյանը: Տուժող կողմը փաստաբան չի ունեցել: Մեղադրողը Ապրեսյանն է եղել, վերահսկող դատախազը՝ Գագիկ Ջահանգիրյանը: Սակայն Խաչատուրի սպանությունից 7 տարի անց դատարանն այդպես էլ վճիռ չի կայացրել. «Թողել են, որ մեղադրյալը մինչեւ կալանքի վերցվելը դիմի փախուստի»,- ավելացրել է սպանվածի մայրը:

Ընտանիքը 1.500 ԱՄՆ դոլար փոխհատուցում է ստացել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 012:

ԱԼԵՔՍԱՆ ՎՈԼՈԴԻԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Ծնվել է Լենինականում, 1975 թվականի հունիսի 24-ին: Բնակվել է Գյումրու Նիզամի փող., 37 տանը: Բանակ զորակոչվելիս ունեցել է միջին մասնագիտական կրթություն: Ապրել է ծնողների հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը մայրը բնորոշել է բավարար:

1995թ.-ի մայիսին Ալեքսանը զորակոչվել է ՀՀ բանակ՝ Լենինականի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս որեւէ առողջական խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում:

Ալեքսան Մկրտչյանը մահացել է 1997 թվականի մայիսի 28-ին՝ զորամասում: Որպես մահվան պաշտոնական պատճառ՝ նշվում է մինինգիտը, օրգանիզմի ինքնաթունավորումը եւ գլխուղեղի վնասվածքը: Մինչդեռ ծնողները համամիտ չեն այս վարկածի հետ եւ պնդում են, որ իրենց որդու մահվան պատճառը սպանությունն է, միաժամանակ նշում, որ որդին սպանվել է հրամանատարի ձեռքով:

Մահվան առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Վերահսկող դատախազը Գագիկ Ջահանգիրյանն է եղել: Դատավարության հետ կապված այլ մանրամասներ հայտնի չեն: Տիկին Անահիտը միայն նշում է, որ գործով կասկածյալները այլեւս չեն շարունակել իրենց ծառայությունը բանակում: Նա միաժամանակ ավելացնում է. «Դատել են անմեղ զինվորների»:

Ընտանիքը պետությունից ստացել է 10.000 ՀՀ դրամ փոխհատուցում, 20.000 ՀՀ դրամ նպաստ եւ 1.300.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 013:

ԱՐՏՅՈՄ ՄԱՐՏԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1978 թվականի նոյեմբերի 7-ին, Գյումրիում: Ընտանիքը բնակվել է Գյումրի, 106/1 հասցեում: Արտյոմն ունեցել է միջնակարգ կրթություն: Նա ապրել է ծնողների եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը, մոր բնորոշմամբ, եղել է նորմալ:

1996 թվականի նոյեմբերի 11-ին Ա.Առաքելյանը Գյումրու զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Զորակոչվելիս, սակայն, ունեցել է առողջական խնդիրներ. «Ունեցել է աղիների հետ խնդիր, ենթակա չի եղել ծառայելու, սակայն զորակոչել են բանակ»,- ասել է սպանվածի մայրը: Որպես շարքային զինվոր՝ Արտյոմը ծառայել է Մարտունու թիվ 36534 զորամասում:

Արտյոմ Առաքելյանը մահացել է 1997 թվականի մարտի 26-ին՝ Երեւանի կենտրոնական կայազորի հոսպիտալում: Օրգանիզմի ընդհանուր ինքնաթունավորումը մահվան պաշտոնական վարկածն է, սակայն մայրը՝ տիկին Անահիտը, պնդում է, որ որդու մահվան պատճառը բոլորովին այլ է: Նա մահացել է հրամանատար Գառնիկ Շահենի Մկրտչյանի (Ճարտար գյուղից) կողմից իրականացված ծեծի պատճառով:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 268-րդ հոդվածի «բ» կետով: 105 հոդվածի համաձայն՝ դիտավորությամբ ծանր մարմնական վնասվածք հասցնելը, որ վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, լսողության, կամ որեւէ այլ օրգանի կորուստ, կամ օրգանի ֆունկցիաների անկում, հոգեկան հիվանդություն, կամ առողջության որեւէ այլ քայքայում՝ զուգորդված աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստի հետ, պատժվում է ազատազրկմամբ երկուսից մինչեւ ութ տարի ժամկետով:

Հիշյալ հոդվածը միեւնույն ժամանակ սահմանում է, որ եթե նույն արարքի հետեւանքով տուժողը մահացել է կամ դա կրել է տանջահարման կամ խոշտանգման բնույթ, կամ կատարվել է իր ծառայողական կամ հասարակական պարտքը կատարող տուժողի նկատմամբ, կամ էլ կատարվել է առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ հինգից մինչեւ տասը տարի ժամկետով:

Իսկ 268-րդ հոդվածի «բ» կետը սահմանում է՝ նույն արարքները, որոնք

առաջացրել են ծանր հետեւանքներ, պատժվում են ազատազրկմամբ երեքից մինչեւ տասը տարի ժամկետով:

Դատավարությունը նախագահել է դատավոր Հակոբյանը: Մոր վստահեցմամբ՝ իրենք փաստաբան չեն ունեցել ու դատավարության ամբողջ ընթացքից գրեթե անտեղյակ են եղել: Չգիտի նաեւ՝ մեղավորներն ու գործով կասկածյալները պատժվե՞լ են ու շարունակե՞լ կամ շարունակո՞ւմ են արդյոք ծառայել ՀՀ բանակում:

Առաքելյանների ընտանիքը դրամական փոխհատուցում է ստացել ՀՀ պաշտպանության նախարարությունից 100.000 դրամ, եւ 110.000 դրամ միանվագ գումար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 014:

ԱԼԲԵՐՏ ԹՈՐՈՍԻ ԹՈՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1976 թվականի հոկտեմբերի 5-ին՝ Լենինականում: Ընտանիքն ապրել է Անի թաղամասի Շահինյան փողոցի 7-րդ շենքում՝ թիվ 30 բնակարանում: Զորակոչման ժամանակ Ալբերտ Թորոսյանն ունեցել է միջին մասնագիտական կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից: Ապրել է մոր ու երկու եղբայրների հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը սպանվածի մոր՝ տիկին Հասմիկի խոսքերով՝ շատ ծանր է եղել:

1994 թվականի նոյեմբերի 1-ին Ալբերտ Թորոսյանը ՀՀ Լենինականի զինկոմիսարիատից զորակոչվել է հայկական բանակ: Զորակոչվելիս ֆիզիկապես առողջ վիճակում է եղել: Ծառայել է Մարտունու շրջանի զորամասում:

Մահացել է 1995 թվականի հոկտեմբերի 12-ին՝ Մարտունու դիրքերում: Որպես մահվան պաշտոնական պատճառ՝ նշվում է հրազենային վնասվածքը: Մահվան առնչությամբ հարուցվել է Քրեական գործ, սակայն կարճվել է՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Թաղման համար տրվող միանվագ գումարի չափը մայրը չի հիշում: Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 015:

ՎԱՐՈՒԺԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է 1981 թվականի փետրվարի 23-ին: Բնակվել է Շիրակի մարզի Հայրենյաց գյուղում: Զորակոչման ժամանակ Վ.Դավթյանն ունեցել է միջին մասնագիտական կրթություն, առողջական վիճակը նորմալ է եղել, բնակվել է ծնողների եւ եղբոր ընտանիքի հետ, քույրերն ամուսնացած են եղել: Ընտանիքի սոցիալական վիճակը՝ ծանր:

ՀՀ բանակ է զորակոչվել Արթիկ քաղաքի զինկոմիսարիատից 1998 թվականի հունիսի 11-ին: Ծառայել է ԼՂՀ-ում, Գյուլստանում, Մարտակերտի «Եղնիկներ»-ում:

Մահացել է Մարտակերտի «Եղնիկներ»-ում, 2008 թվականի օգոստոսի 25-ին: Որպես Վ. Դավթյանի մահվան պաշտոնական պատճառ է նշվում զենքի հետ ոչ ճիշտ վարվելը: Քրեական գործ հարուցվել է, սակայն զոհվածի մայրը՝ Նադեժդա Դավթյանը նշում է, որ չգիտի, թե ովքեր են եղել մեղադրյալները, միայն հիշում է, որ նրանցից մեկը եղել է Չարենցավանից: Ն.Դավթյանը նշում է, որ ճիշտ մարդիկ են մեղադրվել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը ընտանիքին միանվագ տրամադրել է 1.000 ԱՄՆ դոլար, ապա ընտանիքին ամսական 4.000 դրամ հատկացրել է զինկոմիսարիատը: Իսկ, երբ Ն.Դավթյանը հաշմանդամության կարգ է ստացել՝ ընտանիքին թոշակ են հատկացրել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 016:



ԿԱՐԵՆ ՍԱՄՍՈՆԻ ԹՈՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1979 թվականի դեկտեմբերի 12-ին: Բնակվել է Շիրակի մարզի Ջաջուռ գյուղի 11-րդ փողոցի 4-րդ տանը: Ընտանիքը բաղկացած է եղել 5 անձից: Բնակվել է ծանր սոցիալական պայմաններում: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

Բանակ է զորակոչվել 1998 թվականի դեկտեմբերի 11-ին, Ախուրյանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս եղել է առողջ: Ծառայել է Մեղրիում:

Մահացել է 1999 թվականի ապրիլի 17-ին: Մահացել է սահմանի վրա՝ գլխին ստացած մահացու վերքից: Տեղեկություն հաղորդողն, ով չցանկացավ ներկայանալ, պատմում է, որ դիրքերում եղնիկ են խփել, Կարենն ասել է, թե մյուսներին էլ բաժին հանեք: Սրա պատճառով նա վիճաբանել է երկու հերթապահների հետ, նրանք լքել են դիրքերը, իսկ Կարենը մենակ է մնացել դիրքերում եւ թշնամու գնդակից վիրավորվել է գլխից: Դեպքի առնչությամբ քրեական գործ հարուցվել է, մեղադրյալներ եղել են, նրանցից յուրաքանչյուրին դատապարտել են ազատազրկման 7 տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարությունից ընտանիքը՝ որպես փոխհատուցում, ստացել է 2.000 դոլար, որից հետո ամսական 9.000 դրամ, հիմա արդեն 30.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 017:



ԹՈՐԳՈՄ ՄՈՒՇԵՂԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Ծնվել է 1988 թվականի հունվարի 15-ին: Բնակվել է Գյումրի քաղաքում, Անի թաղամասի 9-րդ փողոցի 1-ին շենքի 15 բնակարանում: Զորակոչվելիս Թ.Սարուխանյանը եղել է Մոսկվայի հումանիտար ակադեմիայի ուսանող, բնակվել է ծնողների հետ, եղբայրը բանակում է ծառայել: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ:

2009 թվականի դեկտեմբերի 9-ին Գյումրու զինկոմիսարիատից բանակ է զորակոչվել: Զորակոչվելիս, ըստ բժշկական եզրակացության, ունեցել է եղունգների խրոնիկ հիվանդություն: Ծառայել է Ջաբրահիլի ուսումնական զորամասում, ապա Խոջալուի զորամասում:

Մահացել է 2011 թվականի փետրվարի 12-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում ինքնասպանությունը: Զոհվածի մայրը՝ Լենա Սարուխանյանը պատմում է, որ 1-ին կայազորի փոխգնդապետ Դավթյանը ասել է, որ վիճաբանություն է եղել: Դեպքի առնչությամբ քրեական գործ է հարուցվել, կան երեք մեղադրյալներ՝ Վիլիելմ Արմենակի Ենգիբարյան, Ռոբերտ Բաղալյան, Հրանտ Կարապետյան: Մեղադրվում են ՀՀ Քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով 359-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 375-րդ հոդվածի 2-րդ մասով: Լ.Սարուխանյանը համարում է, որ գործի քննության ողջ ընթացքում անօրինականություններ են եղել: Նա ասում է, որ քննիչը մերժել է իր բողոքն ընդունել եւ ասել է. «Եթե դուք գրեք՝ կստացվի շարադրություն»: Բացի այդ, զոհվածի մայրը նաեւ նշում է. «Մեղադրյալների թիկունքում կան ուրիշ մեղավորներ, որոնք շարունակում են իրենց գործը»:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 2 միլիոն 100 հազար դրամ: Ներկայում ընտանիքը ստանում է 13.500 դրամ նպաստ եւ ամսական 10.000 դրամ՝ միջքաղաքային տրանսպորտից օգտվելու համար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 018:

ԱՐՄԵՆ ԼՅՈՎԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծնվել է 1976 թվականի նոյեմբերի 14-ին: Բնակվել է Շիրակի մարզի Շիրակավան գյուղում: Ա.Վարդանյանն ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 5 անձից:

Զորակոչվել է Մարալիկ քաղաքի զինկոմիսարիատից, 1994 թվականի նոյեմբերի 19-ին: Զորակոչվելիս առողջական վիճակը լավ է եղել: Ծառայել է Երեւանում՝ Սովետաշենի զորամասում:

Մահացել է 1996 թվականի հոկտեմբերի 9-ին, զինվորական հոսպիտալում: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում հրազենային շոկը: Զոհվածի մայրը՝ Մանուշակ Վարդանյանը, պատմում է, որ զենքի ուսումնասիրման ժամանակ բարձիթողի վիճակ է եղել, Արմենը շտապ գնացել է կայազոր՝ առաջին հարկից բարձրացել է երկրորդ հարկ, տեսել է, որ զենքի պահեստը բաց է ու «մակարով» զենքը պահել են ընկերներից մեկի վրա: Արմենը ծառայակցին ասել է՝ զենքն իջեցնի ներքեւ, իսկ նա պատասխանել է՝ հեռու գնա, թե չէ՝ քո վրա կկրակեմ, այդ խոսքի վրա կրակել է: Հասցված վերքից էլ Արմենը մահացել է: Գործի առնչությամբ քրեական գործ հարուցելու, կասկածյալների կամ մեղադրյալների մասին՝ մայրը տեղեկություն չունի:

Որպես փոխհատուցում՝ զոհվածի ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 1.000 կամ 2.000 դոլար միանվագ: Ապա 8 տարի ընտանիքին ընդհանրապես գումար չեն հատկացրել, հաշմանդամության կարգ ստանալուց հետո ծնողներից յուրաքանչյուրին 20 000-ական դրամ թոշակ են տալիս:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 019:

ՍԵԴՐԱԿ ՍԵՄՅՈՆԻ ՉԵՉԵՆՈՎ

Ծնվել է 1990 թվականի հունվարի 10-ին: Բնակվել է Աշոցք գյուղում: Սեդրակ Չեչենովն ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից: Ընտանիքի սոցիալական վիճակը ծանր է եղել:

Բանակ է զորակոչվել Աշոցքի զինկոմիսարիատից: 3 ամիս ծառայել է Քելբաջարի «Քյոփռլում», որից հետո՝ Յանշաղներում:

Մահացել է Յանշաղներում, 2010 թվականի մայիսի 6-ին: Որպես մահվան պաշտոնական պատճառ նշվում է կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքները՝ գլխի, դեմքի, պարանոցի, որովայնի, վերին եւ ստորին վերջույթների ականապայթյունային, բեկորային վնասվածքները: Գործի առնչությամբ քրեական գործ կազմվել է, իսկ ավելի ուշ՝ կարճվել:

Տեղեկություն հաղորդողը նշում է, որ ծառայակիցներից մեկը եղել է Վեդի քաղաքից, երբ ծնողները ցանկություն են հայտնել՝ տեսնել եւ խոսել նրա հետ, ասել են որ տղան մահացել է: Բայց Սեդրակի մահվան առաջին տարելիցի օրը նույն տղան եկել է գյուղ եւ ներողություն խնդրել նրա ծնողներից: Զոհվածի մայրը խնդրել է, որ արարողություններից հետո հանդիպեն, սակայն տղան այլեւս չի եկել եւ անհետացել է:

Տեղեկություն հաղորդողը չհիշեց, թե որպես փոխհատուցում ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ինչքան գումար է ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 020:

ՄՆԱՑԱԿԱՆ ՎՌԱՄԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1987 թվականի հուլիսի 16-ին: Բնակվել է Շիրակի մարզի Գետափ գյուղում: Բնակվել է ծնողների հետ, քույրն ամուսնացած է եղել: Ընտանիքի սոցիալական վիճակն եղել է շատ ծանր: 7-րդ դասարանից թողել է դպրոցը, որպեսզի ուսումը շարունակի միջնակարգ մասնագիտական հաստատությունում, սակայն դրա համար բավարար հնարավորություններ չեն ունեցել:

Մ.Ղազարյանը ՀՀ բանակ է զորակոչվել Արթիկ քաղաքի զինկոմիսարիատից, 2005 թվականի դեկտեմբերի 7-ին: Զորակոչվելիս եղել է առողջ: Ծառայել է ԼՂՀ-ում, Մարտակերտի զորամասում:

Մահացել է Մարտակերտի «Եղնիկներ»-ում, 2007 թվականի սեպտեմբերի 20-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում տրավմատիկ, հեմոռագիկ շոկը: Զոհվածի մայրը՝ Ռուզաննա Կարապետյանը, պատմեց. «Ասել են, որ ընկույզի ծառից է ընկել ու մահացել»:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 2.250.000 դրամ: Հետո զինկոմից ամսական ստացել է 7500 դրամ, վերջին շրջանում գումարը դարձել է 10.000 եւ նպաստի հետ կազմում է 30.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 021:

ԱՐՄԵՆ ՎԱՆԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1981 թվականի մարտի 13-ին: Բնակվել է Շիրակի մարզի Կամո գյուղում: Զորակոչվելիս Ա. Պետրոսյանն ունեցել է միջնակարգ կրթություն: Բնակվել է ծնողների եւ փոքր քրոջ հետ, մեծ քույրն ամուսնացած է եղել:

1999 թվականի հոկտեմբերի 28-ին Ա.Պետրոսյանն Ախուրյանի զինկոմիսարիատից զորակոչվել է բանակ: Ծառայել է Տավուշի մարզի զորամասում:

Մահացել է քաղցկեղից, 2000 թվականի մարտի 23-ին, Երեւանի Մուրացանի զինվորական հոսպիտալում:

Զոհվածի մայրը՝ Շողիկ Պետրոսյանը, չի հիշում, թե որպես փոխհատուցում ՀՀ պաշտպանության նախարարությունը որքան գումար է հատկացրել: Հիմա ընտանիքը զինկոմից ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 022:

ՍԱՅԱԹ ՍԵՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծնվել է 1981 թվականի մայիսի 21-ին: Բնակվել է Շիրակի մարզի Նահապետավան գյուղում: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից, բնակվել է միջին սոցիալական պայմաններում: Զորակոչման ժամանակ եղել է Արթիկի տեխնիկումի 4-րդ կուրսի ուսանող:

ՀՀ բանակ զորակոչվել է 1999 թվականի մայիսին, Արթիկի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս եղել է առողջ: Ծառայել է Գյումրու «Դադոյի», ապա Վայքի զորամասում:

Մահացել է 2000 թվականի մարտի 24-ին, Վայքի զորամասում: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում ինքնասպանությունը: Զոհվածի հայրը՝ Սենիկ Վարդանյանը պատմում է, որ դեպքից 10 օր առաջ ինքը եւ կինը եղել են զորամասում.«Փողի հարց է եղել, ինչի համար էլ սպանել են»: Դեպքի առնչությամբ քրեական գործ հարուցվել է, մահվան փաստով մեղադրյալներ են եղել՝ 3 սպա եւ 2 սերժանտ: Ս.Վարդանյանը նշում է, որ եւ նախաքննության, եւ հետաքննության ժամանակ եղել են անօրինականություններ.«Այս գործում, հենց սկզբից, ոչինչ էլ արդարացի չէր: Քննիչն ասաց. «Սպանություն է եղել, մտնեմ դատախազի մոտ, դուրս գամ եւ գործը ուղարկեմ քննության», այն ժամանակ դատախազը Զահանգիրյանն էր, երբ դուրս եկավ Զահանգիրյանի մոտից՝ ասաց. «Ես անկարող եմ, ոչինչ անել չեմ կարող»:

Ընտանիքը թաղման նպաստ չի ստացել: 2004-2005 թվականներին, երբ զոհվածի հայրը Նորք Մարաշի բժշկական կենտրոնում է եղել՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2 միլիոն դրամ է հատկացրել. սրտի վիրահատության համար՝ 1.800.000 դրամ, լեղապարկի վիրահատության համար՝ 300.000 դրամ: Հիմա ծնողները զինկոմից ստանում են 90 000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 023:

ԱՐՏՅՈՄ ԴԵՐԵՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծնվել է 1980 թվականին: Բնակվել է Շիրակի մարզի Նահապետավան գյուղում: Ա.Վարդանյանը զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից, սոցիալական պայմանները եղել են նորմալ:

Բանակ զորակոչվել է 1998 թվականի մայիսին, Արթիկի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս եղել է առողջ: Ծառայել է Վայքի զորամասում, իսկ հետո՝ Հորադիսում:

1999 թվականի հունիսից համարվում է անհայտ կորած:

Զոհվածի հորեղբայրը՝ Սաշա Վարդանյանն, ասում է, որ ընտանիքն ընդհանրապես փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 024:

ՏԻԳՐԱՆ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ծնվել է 1971 թվականի մարտի 21-ին: Բնակվել է Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղում: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից:

1992 թվականին Արթիկի զինկոմիսարիատից մեկնել է պայմանագրային ծառայության: Զորակոչվելիս առողջական վիճակը լավ է եղել: Եղել է ՀՀ ՊՆ զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակի հրամանատար:

Սրտամկանի եւ ենթաստամոքսի քաղցկեղի բուժման նպատակով եղել է Քելբաջարի հիվանդանոցում, Երեւանի Մուրացանի զինվորական հոսպիտալում, ապա տեղափոխել են Զեյթունի ուռուցքաբանական կենտրոն, որտեղ վիրահատել են: Վիրահատությունից հետո Տ.Հովսեփյանին տեղափոխել են տուն, որտեղ էլ 2006 թվականի օգոստոսի 13-ին մահացել է:

Ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից, թաղման ծախսերի համար ստացել է 800.000 դրամ՝ միանվագ: Ներկայում ընտանիքը 10.000 դրամ էլ ստանում է ամսական: 2010-2011 թվականներին 50.000 դրամ է ստացել Շիրակի մարզպետարանի կողմից:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 025:

ՍԵՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

Ծնվել է 1957 թվականի հունիսի 5-ին: Բնակվել է Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղում: Ընտանիքը բաղկացած է եղել 6 անձից, գտնվել է ծանր սոցիալական վիճակում:

Ս.Վարդերեսյանը Արթիկ քաղաքի զինկոմիսարիատից մեկնել է պայմանագրային ծառայության (տեղեկություն տրամադրողը՝ զոհվածի դուստրը, չի հիշում, թե կոնկրետ երբ է հայրը մեկնել ծառայության): Ծառայել է ԼՂՀ պաշտպանական սահմանում:

Մահացել է 1999 թվականի օգոստոսի 19-ին՝ վրաերթի է ենթարկվել ծառայությունից արձակուրդ վերադառնալիս:

Զոհվածի դուստրը չի հիշում, թե ՀՀ պաշտպանության նախարարությունից միանվագ ինչքան օգնություն են տվել: Մինչեւ երեխաների չափահաս դառնալը ընտանիքը յուրաքանչյուրի համար ամսական ստացել է 12.000 դրամ, ներկայում ստանում է 12.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 026:

ԳԱԼՈՒՍՏ ՄԱՆՎԵԼԻ ՍԵՐՈԲՅԱՆ

Ծնվել է 1979 թվականի սեպտեմբերի 15-ին: Բնակվել է Շիրակի մարզի Ախուրյան գյուղում: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից, սոցիալական վիճակը եղել է ծանր: Զորակոչման ժամանակ ունեցել է միջնակարգ կրթություն:

1998 թվականի հոկտեմբերի 27-ին, Ախուրյանի զինկոմիսարիատից զորակոչվել է բանակ: Զորակոչվելիս առողջական վիճակը եղել է լավ: Ծառայել է Էջմիածնի զորամասում, ապա Քելբաջարում:

Գալուստ Սերոբյանը մահացել է 1999 թվականի օգոստոսի 5-ին, Քելբաջարի սահմանի պաշտպանական դիրքերում: Մահացել է զորավարժանքի ժամանակ՝ ականի պայթյունից:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է միանվագ 700 դոլար: Հիմա զոհվածի ծնողներից յուրաքանչյուրը զինկոմիսարիատից ստանում է 20.000-ական դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 027:

ԱՐՄԵՆԱԿ ԻՇԽԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ծնվել է 1987 թվականի հոկտեմբերի 8-ին: Բնակվել է Բասենում: Զորակոչվելիս ունեցել է ութնամյա կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 5 անձից, սոցիալական վիճակը եղել է բավարար:

ՀՀ բանակ Ա.Հովսեփյանը զորակոչվել է Ախուրյանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս եղել է առողջ, միայն թեւն է կոտրված, հետո, սխալ կպնելու արդյունքում, ծուռ աճած եղել: Արմենակի մայրը՝ Ռուզաննա Բարսեղյանը, պատմում է, որ որդին 3 տարի տարկետման իրավունք է ունեցել, բայց հաշվի չառնելով այդ հանգամանքը, նրան զորակոչել են: Ծառայել է Մարտակերտի շրջանում՝ Հորաթաղում:

Մահացել է 2009 թվականի դեկտեմբերի 16-ին, Ալաշանի հոսպիտալում: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում գլխուղեղի կարեւորագույն կենսական ֆունկցիաների խանգարումը: Զոհվածի մայրը պատմում է, որ որդուն ծեծել են եւ նա 6 ամիս պառկել է հիվանդանոցում, եւ ըստ մոր, հենց ծեծն է եղել մահվան պատճառը: Արձակուրդից զորամաս վերադառնալիս նա ջերմություն է ունեցել, տեղափոխել են հոսպիտալ, դեղ են տվել, որից հետո ետ է եկել զորամաս, կրկին վատանալուց հետո նորից տարել են Ալաշանի հոսպիտալ, բայց Արմենակը ասել է. «Մի տարեք ինձ էդ հոսպիտալ, քանի որ «Քաչալ» անունով բժիշկը կսպանի ինձ»: Նրան ծայրահեղ ծանր վիճակով Ստեփանակերտից ուղղաթիռով տեղափոխել են Երեւանի «Մուրացանի» զինվորական հոսպիտալ, որտեղ 9 օր պահել են սարքավորումներով:

Դեպքի առնչությամբ քրեական գործ է հարուցվել քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի հատկանիշներով, բայց կարճվել է:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 2 միլիոն դրամ: Հիմա ստանում է ամսական 30.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 028:

ԿԱՐԵՆ ՌՈՒԲԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1980 թվականի հուլիսի 27-ին: Բնակվել է Ախուրյանի Գերմանահարավսլավական թաղամասում, բնակարան 36-ում: Բնակվել է մոր եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը ծանր է եղել: Զորակոչվելիս ունեցել է բարձրագույն զինվորական կրթություն:

2002 թվականի սեպտեմբերի 1-ին Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտն ավարտելուց հետո, որպես սպա նշանակվել է ծառայության Տավուշի մարզի Իջեւանի զորամասում:

Մահացել է 2002 թվականի հոկտեմբերի 29-ին, ավտովթարի հետեւանքով: Զոհվածի եղբայրը՝ Կամո Առաքելյանն ասում է, որ քրեական գործ հարուցվել է, դատավարություն անցկացվել է, բայց չեն հետաքրքրվել եւ չգիտեն հետո ինչ է եղել:

ՀՀ պաշտպանության նախարարությունից փոխհատուցում ստացել են, բայց Կ.Առաքելյանը չհիշեց գումարի չափը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 029:

ՍԵՐԳԵՅ ԶԱՎԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1990 թվականի հունվարի 19-ին: Բնակվել է Գյումրի քաղաքում՝ Պարույր Սեւակ, 3-րդ շենք, բնակարան՝ 43 հասցեում: Ս.Մանուկյանը ունեցել է միջին մասնագիտական կրթություն, սովորել է Գյումրու Երկաթգծի ուսումնարանում: Բնակվել է ծնողների հետ, քույրն ամուսնացած է եղել, ծնողները չեն աշխատել:

2008 թվականի հունիսի 21-ին Ս.Մանուկյանը Գյումրու զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Զորակոչման ժամանակ առողջական վիճակը եղել է լավ: Ծառայել է Հոկտեմբերյանի ուսումնական զորամասում, ապա Սիսիանի Նոր Ավան գյուղի ՀՀ ՊՆ զորամասի 3-րդ տանկային վաշտի 1-ին N 733 տանկային դասակում:

Մահացել է Սիսիանի Նոր Ավան գյուղի ՀՀ ՊՆ զորամասում, 2009 թվականի նոյեմբերի 10-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում ինքնասպանությունը:

Ըստ զոհվածի ծնողների՝ Զավիկ Մանուկյանի եւ Լամարա Մանուկյանի, եղել է ոչ թե ինքնասպանություն, այլ դիտավորյալ սպանություն: Գործի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով եւ 375-րդ հոդվածի 2-րդ մասով: Մահվան փաստով մեղադրյալներ են եղել Վահագն Էդիկի Գասպարյանը՝ ՀՀ ՊՆ զորամասի դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ, Միեր Սասունի Սիմոնյանը՝ ՀՀ ՊՆ զորամասի վաշտի հրամանատար, կապիտան Գեղամ Հրանտիկի Ասատրյանը՝ ՀՀ ՊՆ զորամասի հրամանատար, փոխգնդապետ: Ծնողները նշում են, որ մեղադրվել են ճիշտ մարդիկ, սակայն մեղադրանքն է սխալ եղել՝ պետք է լիներ դիտավորյալ սպանություն, քանի որ նրանք թմրամոլներ են: Գործով քննիչ եղել է Վասպուրակ Ավետիսյանը, դատավոր՝ Համլետ Դավթյանը: Գործով մեղադրվող Միեր Սասունի Սիմոնյանը համաներումից հետո շարունակում է աշխատել:

Ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից որպես փոխհատուցում՝ ստացել է 2.100.000 դրամ եւ 2012 թվականի հունվարից ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 030:

ՍԱՄՎԵԼ ՎԱՂԻՆԱԿԻ ՁՆԴՈՅԱՆ

Ծնվել է 1976 թվականի դեկտեմբերի 4-ին: Բնակվել է Երեւանում՝ Ավանեսով 1-ին փողոց, 8-րդ շենք, բնակարան 10: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից, սոցիալական պայմանները եղել են նորմալ: Զորակոչվելիս ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

ՀՀ բանակ զորակոչվել է 1994 թվականի դեկտեմբերի 5-ին, Երեւանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս եղել է առողջ: Ծառայել է Հորադիսում, ապա՝ Հորոբլուում:

Մահացել է 1995 թվականի սեպտեմբերի 8-ին, Հորոբլուում: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում դիտավորյալ սպանությունը: Զոհվածի մայրը՝ Ասյա Ձնդոյանը, պատմում է, որ որդին սպանվել է խրամատներում. 4 զինվորով միշտ գնացել են մոտակա գյուղ՝ սնունդ բերելու, բայց այդ անգամ գնացել են երեք զինվորներով: Նախկին զինաշխատողը հետեւել է տղաներին եւ տեսնելով, որ ուրիշ մարդ չկա, հերթով սպանել է նրանց եւ վերցրել է զենքերը: Հրամանատարությունից տեղեկացրել են, որ Սամվելը փախած է եւ իրեն կալանքի են վերցրել, ասել են. «Մինչեւ որդիդ չգա՝ բաց չենք թողնի»: Երբ գտել են դին՝ զոհվածի մորը տարել են, որ դիակը ճանաչի. «Դիակն անճանաչելի էր, քանի որ գլխատված էր»: Մայրը որդու դին ճանաչել է նշաններից՝ մատի վրա կացնից ստացված սպի է եղել եւ ոտքի բութ մատն է բացակայել: Դրանից հետո դին տեղափոխել են Շիրակի մարզի Փանիկ գյուղ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ է հարուցվել: Ա.Ձնդոյանը նշում է, որ հրամանատարին ազատել են աշխատանքից:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 031:

ՍՈՍ ՆԻԿՈԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1979 թվականի հոկտեմբերի 18-ին: Բնակվել է Շիրակի մարզի Մեղրաշեն գյուղի 8-րդ փողոցի 8-րդ տանը: Սոս Սարգսյանը զորակոչման ժամանակ ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 6 անձից, սոցիալական վիճակը եղել է միջին, ընտանիքի անդամների խոսքերով՝ նորմալ:

1996 թվականի հոկտեմբերի 30-ին Սոսը զորակոչվել է ՀՀ բանակ՝ Արթիկի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական վիճակը եղել է լավ: Ծառայել է Գորիսում, Հորադիզում:

Մահացել է Հորադիզի «Քյոռլու» անվանումը կրող զորամասի վաշտում, 1997 թվականի մայիսի 22-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում ինքնասպանությունը: Գործի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 6-րդ կետով եւ 268-րդ հոդվածի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել Լադիկ Վահագնի Հարությունյանին, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին կետով՝ Հրաչ Գեւորգի Խաչատրյանին, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին կետով եւ 187-րդ հոդվածով՝ Կարեն Սմբատի Քոչարյանին:

Վերջիններս հոդվածներին համապատասխան դատապարտվել են, Հրաչ Խաչատրյանը շարունակել է ծառայությունը մինչեւ ծառայության ժամկետի ավարտը: Զոհվածի մայրը՝ Ռուզաննա Սարգսյանը, նշել է, որ գործի քննության ողջ ընթացքում անօրինականություններ են եղել եւ հավելել է, որ, իր խոր համոզմամբ, Յուրի Խաչատուրովին եւս պետք էր մեղադրանք առաջադրել: Նա պատմում է, որ դեպքի ժամանակ Յուրի Խաչատուրովը եղել է զորամասի տարածքում քնած: Իսկ երբ իրենք պահանջել են հարցաքննել Խաչատուրովին, քննիչն ասել է. «Մեր օրերում գեներալին չեն հարցաքննում եւ ցուցմունք չեն վերցնում»:

Զոհվածի մայրը նշում է, որ չի հիշում, թե ինչքան միանվագ օգնություն է ստացել ՀՀ պաշտպանության նախարարությունից, հիմա ընտանիքը ստանում է ամսական 20.000 դրամ նպաստ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 032:

ԱՐԱՄ ՍԵՐՈԲԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1988 թվականի հունիսի 14-ին: Բնակվել է Նոր Ախուրյանում՝ 27 շենք, բնակարան 3 հասցեում: Ընտանիքը բաղկացած է եղել 6 անձից, եղել է սոցիալական ծանր պայմաններում: Զորակոչման ժամանակ եղել է Գյուղատնտեսական քոլեջի ուսանող:

Զորակոչվել է 2006 թվականի հունիսի 5-ին, Ախուրյանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս եղել է առողջ: 6 ամիս ծառայել է Խոջալուի ուսումնական զորամասում, որից հետո տեղափոխել են Ստեփանակերտի «Ցոր» զորամաս:

Մահացել է 2008 թվականի սեպտեմբերի 4-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում ինֆարկտը: Հերթապահության ժամանակ դուրս է եկել ճաշարանից՝ զուգարան գնալու համար, ճանապարհին ընկել է եւ տեղում մահացել: Քրեական գործ հարուցվել է, սակայն ծնողները չեն հետաքրքրվել դրանով:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից միանվագ ստացել է 1.200.000 դրամ: Հիմա ընտանիքը ստանում է ամսական 50.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 033:

ՎԱԶԳԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆ

Ծնվել է 1987 թվականի մարտի 3-ին՝ Շիրակի մարզի Մեղրաշեն գյուղում: Վազգենն ապրել է ծնողների, երկու քրոջ եւ եղբոր հետ: Բանակ զորակոչվելիս ունեցել է բարձրագույն կրթություն: Ընտանիքը սոցիալապես նորմալ վիճակում է գտնվել:

2008 թվականի հունիսի 23-ին Վազգենը Արթիկի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Տավուշի մարզի զորամասի «Թազա պոստ» կոչվող թիվ 28 հենակետում:

Մահացել է 2009 թվականի հունվարի 24-ին՝ դիրքերում: Մահվան դեպքը պաշտոնապես որակվել է սպանություն: Հարուցվել է քրեական գործ ու այժմ ընթացքի մեջ է: Գործը դեռեւս դատարան չի հանձնվել: Տուժող կողմը փաստաբան չունի: Գործում ընդգրկված դատախազներն են Արայիկ Բաբայանն ու Հարությունյանը:

Ընտանիքը ստացել է 10.000 ՀՀ դրամ թոշակ եւ 20.000 ՀՀ դրամ՝ որպես փոխհատուցում:

Մայրը՝ Ծովինար Պասկեւիչյանը, նշել է, թե չի ցանկանում, որ որեւէ մեկը միջամտի գործի քննությանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 034:



ՎԱՀԱՆ ՅՈՒՐԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծնվել է 1974 թվականի ապրիլի 17-ին՝ Լենինականում: Բնակվել է Ջափարիձե փողոցում՝ 95 տանը՝ ծնողների, քրոջ եւ եղբոր հետ: Բանակ զորակոչվելիս Վահանն ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքի սոցիալական վիճակը, հարազատների գնահատմամբ, եղել է միջին:

Բանակ է զորակոչվել 1994 թվականի մայիսի 5-ին՝ Գյումրու զինկոմիսարիատից: Զորակոչի ժամանակ առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է Հորադիզում: 1995 թվականի մայիսի 25-ին հայտարարվել է անհայտ կորած:

Յուրի Հակոբյանի ընտանիքը փոխհատուցվել է 280.000 ՀՀ դրամ միանվագ օգնությամբ եւ ամենամսյա 30.000 ՀՀ դրամ թոշակով:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 035:

ՍԵՐՅՈԺԱ ՅՈՒՐԻԿԻ ԱՐԵՎԻԿՅԱՆ

Ծնվել է 1978 թվականի հունիսի 7-ին՝ Շիրակի մարզի Փանիկ գյուղում: Ապրել է ծնողների եւ եղբոր հետ՝ գյուղում, 1-ին փող., 32 տուն հասցեում: Ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքի սոցիալական վիճակը, հարազատների բնորոշմամբ, եղել է նորմալ:

1996 թվականի նոյեմբերի 30-ին Սերյոժան Արթիկի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Զորակոչվելու ժամանակ առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է Վանաձորում՝ «Դուցի» զորամասում, եղել է շարքային զինծառայող:

Մահացել է 1997 թվականի ապրիլի 1-ին՝ Երեւանի Էրեբունի հիվանդանոցում՝ արյան վարակումից: Զոհվածի ընտանիքը բացակայում էր ՀՀ-ից: Տեղեկությունները հաղորդել է զոհվածի հորեղբոր որդին՝ Գուրգեն Արեւիկյանը, ուստի այլ մանրամասներ հնարավոր չի եղել ճշտել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 036:

ԳԵՎՈՐԳ ԿԱՐԱՊԵՏԻ ԽՆԿՈՅԱՆ

Ծնվել է.1985 թվականի դեկտեմբերի 11-ին՝ Գյումրիում: Բնակվել է Գյումրու Տրդատ Ճարտարապետի 18ա շենքի 3-րդ բնակարանում: Բանակ զորակոչվելիս ունեցել է բարձրագույն կրթություն: Գեւորգն ապրել է ծնողների, քրոջ եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ:

2004 թվականի սեպտեմբերի 21-ին, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտն ավարտելուց հետո, անցել է ծառայության ՀՀ բանակում: Այդ ընթացքում առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Մահվան պատճառը եղել է սպանությունը: Սա Գեւորգ Կարապետյանի մահվան պաշտոնական վարկածն է: Դատավարության ու պատժվածների մասին որեւէ տեղեկություն ընտանիքը չունի:

Ըստ սպանվածի մոր՝ ընտանիքն ստացել է 10.000 ՀՀ դրամ փոխհատուցում եւ ամենամսյա 20.000 ՀՀ դրամ նպաստ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 037:

ԳՐԻՇԱ ԱՎԵՏԻՔԻ ՓԻԼՈՍՅԱՆ

Ծնվել է 1941 թվականի հոկտեմբերի 23-ին՝ Լենինականում: Գրիշայի ընտանիքը հետպատերազմական տարիներին 6 անձով՝ կնոջ,տղայի, մոր եւ զոքանչի հետ, ապրել է Գյումրիում՝ 214/130 տնակում, մոր՝ Հասմիկ Փիլոսյանի բնորոշմամբ՝ սոցիալապես շատ ծանր պայմաններում: Նա ունեցել է 2 բարձրագույն կրթություն:

Գրիշա Փիլոսյանը ՀՀ բանակ է մեկնել կամավոր, մեկնելու օրն ու ամսաթիվը մայրը չի հիշում, սակայն զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր, մոր վստահեցմամբ, չի ունեցել: Ծառայել է Լաչինում՝ որպես ավագ լեյտենանտ: Այնուհետ անհասկանալի պայմաններում անհայտ կորել է: 2007 թվականի դեկտեմբերի 2-ին դատական կարգով ճանաչվել է մահացած:

Որպես փոխհատուցում՝ Գրիշա Փիլոսյանի ընտանիքը ստանում է 10.000 ՀՀ դրամ եւ 20.000 ՀՀ դրամ նպաստ, ստացել է նաեւ 1.300.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 038:

ՅՈՒՐԻ ՎՈԼԿՈՎԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Զորակոչվել է Մարալիկի զինկոմիսարիատից:

Մահացել է 1994 թվականի դեկտեմբերի 16-ին:

Զոհվածի հարազատները չեն ցանկացել տեղեկություն տրամադրել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 039:

ԱՐՏԱԿ ՄԱՄԻԿՈՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Ծնվել է 1977 թվականի հոկտեմբերի 3-ին, Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում: Բնակվել է Երկաթուղայինների փող., 2-րդ նրբ., 13 տուն հասցեում՝ ծնողների եւ եղբոր հետ: Բանակ զորակոչվելիս Արտակն ունեցել է բարձրագույն կրթություն: Ընտանիքը սոցիալապես կայուն վիճակում է եղել:

Արտակ Պողոսյանը ՀՀ բանակ է զորակոչվել Մարալիկի զինկոմիսարիատից՝ 1999թ.-ի հունիսի 28-ին: Ֆիզիկապես առողջ է եղել: Ծառայել է Իջեւանում, ունեցել կրտսեր լեյտենանտի կոչում:

Մահացել է 2000 թվականի փետրվարի 1-ին, Իջեւանի զորամասում: Մահվան պատճառը հեմոռագիկ, տրավմատիկ շոկն է եղել: Հարուցվել է քրեական գործ: Դատավարության ընթացքից ծնողները գրեթե տեղյակ չեն եղել: Եղբայրը՝ Սեւակ Պողոսյանը, միայն նշում է, որ պիտի դատվեր հրամանատարը, քանի որ եղբոր մահվան միակ մեղավորը նա է. «Ե՛ւ քնի՛չը, ե՛ւ դատախազը ասել են, որ սահմանները պահպանելու են նարկոմանները եւ խուլիգանները: Ոչ մի նորմալ զինվոր սահմանում չի ծառայի»:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքն ստանում է ամենամսյա թոշակ՝ 30.000 դրամի չափով:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 040:

ՎԱՐՈՍ ՌՈՒԴԻԿԻ ԱԼԵՔՅԱՆ

Ծնվել է 1983 թվականի դեկտեմբերի 29-ին, Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում: Ապրել է Մարալիկում՝ Շիրակացի փողոց, տուն 40 հասցեում՝ ծնողների եւ եղբոր հետ: Բանակ զորակոչվելիս ունեցել է ութնամյա կրթություն: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ:

2001 թվականի դեկտեմբերի 29-ին Մարալիկի զինկոմիսարիատից զորակոչվել ՀՀ բանակ: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Հադրութի զորամասում:

Վարոս Ալեքյանը մահացել է 2002 թվականի հունվարի 18-ին՝ հիշյալ զորամասում: Որպես մահվան պաշտոնական պատճառ նշվում է օրգանիզմի ընդհանուր ինտոկսիկացիան: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Դատավարությունն ընթացել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում՝ դատավորներ Մ.Ասատրյանի եւ Ս.Աղաբեբյանի նախագահությամբ: Դատապարտվել են նույն զորամասի սպաներ Արթուր Մաթեւոսյանը, Գարիկ Ներսիսյանը, Հովհաննես Կարապետյանը, մեկ այլ զորամասի սպա՝ Էդգար Մանուկյանը՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի «ա» եւ «բ» կետերի: Հիշյալ հոդվածը սահմանում է՝ առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

1) կրկին (կամ երկրորդ անգամ,

2) խոշոր չափերով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Ըստ մոր՝ Լիզա Գրիգորյանի, ընտանիքը ստանում է ամենամսյա 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 041:

ՀԱԿՈԲ ՍԱՇԱՅԻ ՓԻԼՈՍՅԱՆ

Ծնվել է 1975 թվականի մարտի 17-ին՝ Լենինականում: Բնակվել է Մանուշյան փող., 38 տուն հասցեում՝ ծնողների, երկու քույրերի եւ եղբոր հետ: Բանակ զորակոչվելիս Հակոբ Փիլոսյանն ունեցել է միջին մասնագիտական կրթություն: Ընտանիքի սոցիալական վիճակը հարազատները բնորոշել են միջին:

1993 թվականին Հակոբը Լենինականի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Որպես ենթասպա՝ ծառայել է Հորադիսում: Բանակ զորակոչվելիս նա առողջական խնդիրներ չի ունեցել: Մահվան հետ կապված մանրամասներ հարազատները չեն հաղորդել: Միայն ասվել է, որ նա մահացել է Հորադիսում:

Որպես գումարային փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է միանվագ 50.000 ՀՀ դրամ, զինկոմիսարիատից՝ 21.000 ՀՀ դրամ թոշակ, 10.000 ՀՀ դրամ՝ փոխհատուցում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 042:

ԿԱՐԵՆ ԴԱՆԻԵԼԻ ՕԼԵՅԱՆ

Ծնվել է 1972 թվականի սեպտեմբերի 22-ին: Բնակվել է Մարալիկ քաղաքում: Զորակոչման ժամանակ Կարեն Օլեյանը եղել է Մանկավարժական ինստիտուտի վերջին կուրսի ուսանող, ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից: Ընտանիքի սոցիալական վիճակը լավ է եղել:

Կ.Օլեյանը զորակոչվել է Գյումրու զինկոմիսարիատից, 1993 թվականի դեկտեմբերի 13-ին: Առողջական վիճակը եղել է լավ: Ծառայել է Սովետաշենի զորամասում, ապա Հորադիսում:

1994 թվականի սեպտեմբերի 28-ից համարվում է անհետ կորած: 2002 թվականի նոյեմբերի 15-ին դատական կարգով ճանաչվել է անհայտ կորած:

Կ.Օլեյանի ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 300.000 դրամ միանվագ փոխհատուցում: Ներկայում ընտանիքը 22.500 դրամ թոշակ է ստանում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 043:

ՄԵՍՐՈՊ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԷԼԱՄԻՐՅԱՆ

Ծնվել է Մարալիկ քաղաքում, 1980 թվականի նոյեմբերի 30-ին: Մ. Էլամիրյանն ունեցել է միջնակարգ կրթություն: Զորակոչման ժամանակ ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից: Ընտանիքի սոցիալական վիճակը ծանր է եղել:

ՀՀ բանակ է զորակոչվել Մարալիկի զինկոմիսարիատից, 1998 թվականի դեկտեմբերի 1-ին: Զորակոչվելիս առողջական վիճակը լավ է եղել: Ծառայել է Մարտակերտում, հետո տեղափոխվել է Մարտունու հրաձգային զորամաս:

Մահացել է ԼՂՀ-ում՝ Խոջալուի հոսպիտալում, 2000 թվականի դեկտեմբերի 21-ին: Որպես Մ. Էլամիրյանի մահվան պաշտոնական պատճառ է նշվում կայծակնային թունավորումը: Գործի առնչությամբ դատական գործ հարուցվել է, բայց թե ովքեր են եղել կասկածյալները, մեղադրյալները՝ Մեսրոպի մայրը՝ Ռուզաննա Այվազյանը, չգիտի: «Արդյո՞ք ճիշտ մարդիկ են մեղադրվել» հարցին Ռ. Այվազյանը պատասխանում է. «Գործը շատ արագ փակվեց»: Գործով քննիչը եղել է Սահակյանը:

Որպես փոխհատուցում՝ զոհվածի ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 300.000 դրամ: Ներկայում ընտանիքը զինկոմիսարիատից ստանում է թոշակ, որի չափը մայրը կոնկրետ չգիտի:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 044:



ՀԱՄԼԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Ծնվել է 1976 թվականի դեկտեմբերի 14-ին: Բնակվել է Մարալիկ քաղաքում: Հ.Հովհաննիսյանը զորակոչվելիս ունեցել է թերի բարձրագույն կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 6 անձից:

ՀՀ բանակ է զորակոչվել 1992 թվականի հունիսի 2-ին: Զորակոչվելիս առողջական վիճակը եղել է լավ: Ծառայել է Մարտակերտում, «Եղնիկներ»-ում:

Մահացել է 1996 թվականի օգոստոսի 4-ին, «Եղնիկներ»-ում: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում ներքին արյունահոսությունը: Դեպքի առնչությամբ գործ չի հարուցվել:

Զոհվածի մայրը՝ Ռուզաննա Գալստյանը նշում է, որ չի հիշում, թե որպես փոխհատուցում՝ ընտանիքը որքան գումար է ստացել ՀՀ պաշտպանության նախարարությունից: Հիմա ընտանիքը ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 045:

ԳՐԻԳՈՐ ԱՐԶՈՒՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ծնվել է 1966 թվականի նոյեմբերի 2-ին Շիրակի մարզի Պեմզաշեն գյուղում: Բանակ զորակոչվելիս Գրիգորը եղել է ամուսնացած, ապրել է կնոջ ու երեք դստերի հետ: Ունեցել է բարձրագույն կրթություն: Մինչեւ զորակոչը՝ աշխատել է, ընդգրկված է եղել պարի խմբում:

1992-ին Գրիգոր Մխիթարյանը Արթիկի զինկոմիսարիատից կամավոր մեկնել է ՀՀ բանակ: Այդ ընթացքում չի ունեցել առողջական որեւէ խնդիր: Ծառայել է Չավուշի ջոկատում:

Գրիգոր Մխիթարյանը մահացել է 1996 թվականի նոյեմբերի 18-ին՝ Արթիկում: Մահվան պատճառն ավտովթարն է եղել, ինչի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ինչպես նշում է մահացածի հայրը՝ Արզուն Մխիթարյանը, պետությունից ստացած գումարային միակ փոխհատուցումը մահվան համար հատկացված գումարն է, որի չափը չի հիշել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 046:

ԱՐԹՈՒՐ ՍԱՄՎԵԼԻ ՄԵԹՈՅԱՆ

Ծնվել է 1979 թվականի ապրիլի 24-ին՝ Շիրակի մարզի Զորակապ գյուղում: Ապրել է գյուղում ծնողների, 2 եղբոր եւ քրոջ հետ: Ունեցել է ութնամյա կրթություն: Մինչեւ բանակ զորակոչվելը՝ Արթուրը ապրել է ՌԴ-ում, Հայաստան է վերադարձել հատկապես ծառայության անցնելու նպատակով:

1997 թվականի մայիսին Արթուրը Արթիկի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Այդ ընթացքում առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է Հորադիսում: Արթուրը մահացել է 1999 թվականի օգոստոսի 19-ին՝ Հորադիսի զորամասում՝ հրազենային վնասվածքից:

Մահվան առնչությամբ հարուցվել է քրեական գործ, սակայն, ինչպես նշում է մահացածի հորեղբայրը՝ Անդրանիկ Մեթոյանը, դատապարտվել է անմեղ զինվոր, մինչդեռ, ըստ նրա, Արթուրի մահվան միակ մեղավորը եղել է հրամանատարը: Հորեղբոր տեղեկություններով, ընտանիքը որեւէ փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 047:



ԿԱՐԵՆ ԿՈՐՅՈՒՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1981 թվականի փետրվարի 12-ին: Բնակվել է Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղում: Կ.Ավետիսյանը զորակոչման ժամանակ ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 6 անձից, սոցիալական վիճակը ծանր է եղել:

Բանակ զորակոչվել է Մարալիկի զինկոմիսարիատից՝ 1999 թվականի մայիսի 20-ին: Ծառայել է Սովետաշենի զորամասում:

Մահացել է Երասխավանում, 2001 թվականի մարտի 8-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում տրավմատիկ, հեմոռագիկ շոկը: Զոհվածի մայրը՝ Մելանյա Ավետիսյանը նշում է, որ մահվան պատճառ է հանդիսացել վիճաբանությունը, որի ժամանակ էլ կրակել են որդու վրա: Դեպքի առնչությամբ զինծառայող Սերոբ Ղազարյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածով, 265-րդ հոդվածի «ա» կետով եւ 100-րդ հոդվածով: Զոհվածի մայրը նշում է, որ ճիշտ մարդ է մեղադրվել:

Ընտանիքը ստացել է 100.000 դրամ թաղման նպաստ, հիմա ստանում է ամսական 20.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 048:

ՀԱԿՈԲ ՄԱՄԲՐԵԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1981 թվականի ապրիլի 27-ին: Բնակվել է Շիրակի մարզի Հայկաձոր գյուղում: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից, սոցիալական վիճակը եղել է նորմալ: Զորակոչվելու ժամանակ ունեցել է միջնակարգ կրթություն:

ՀՀ բանակ զորակոչվել է 1999 թվականի մայիսի 26-ին, Մարալիկի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական վիճակը եղել է լավ: Ծառայել է Հոկտեմբերյանի ուսումնական տանկային զորամասում, ապա Վարդենիսում:

Մահացել է 2000 թվականի փետրվարի 1-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում ներքին արյունահոսությունը, որ առաջացել է ավտովթարի հետեւանքով:

Հարուցվել է դատական գործ, մեղադրվել է զորամասի հրամանատարը:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 200.000 դրամ թաղման նպաստ: Հիմա ընտանիքը ստանում է ամսական 33.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 049:

ՀՐԱՉ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1992 թվականի նոյեմբերի 23-ին: Բնակվել է Գյումրի քաղաքում՝ Լալայան փողոցի 104/814 տնակում: Ընտանիքը բաղկացած է եղել 3 անձից, ապրել է ծանր սոցիալական պայմաններում: Զորակոչվելիս ունեցել է ութնամյա կրթություն:

Զորակոչվել է 2010 թվականի նոյեմբերի 25-ին, Գյումրու զինկոմիսարիատից: Ծառայել է Նոյեմբերյան քաղաքի զորամասում:

Մահացել է 2012 թվականի հունիսի 4-ին, գիշերը՝ ժամը 01:45-ին, հայ-ադրբեջանական սահմանի հյուսիսարեւելյան հատվածում, հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում:

Զոհվածի մայրը՝ Աիդա Սարգսյանը, նշում է, որ կոնկրետ չի հիշում, թե ՀՀ պաշտպանության նախարարությունից որքան միանվագ գումար է հատկացվել, բայց երեւի 4.000-4.500 ԱՄՆ դոլար, իսկ Գյումրու զինկոմիսարիատից՝ 71.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 050:

ԱՎԵՏԻՔ ԿՈԼՅԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1987 թվականի սեպտեմբերի 28-ին: Բնակվել է Շիրակի մարզի Արեւշատ գյուղում: Ա.Ավետիսյանն ունեցել է միջնակարգ կրթություն: Զորակոչվելու ժամանակ ընտանիքը բաղկացած է եղել 6 անձից, սոցիալական վիճակը եղել է նորմալ:

Զորակոչվել է Արթիկի զինկոմիսարիատից, 2005 թվականի դեկտեմբերի 8-ին: Զորակոչվելիս առողջական վիճակը եղել է լավ: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Մարտակերտում:

Մահացել է Մարտակերտի դիրքերում, 2006 թվականի նոյեմբերի 1-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում արյան մեծ չափի կորուստը: Զոհվածի մայրը՝ Ֆենյա Ավետիսյանը, ասում է, որ դիրքերում՝ հերթապահության ժամանակ, նույն զորամասի զինծառայողն է կրակել որդու վրա: Գործի առնչությամբ քրեական գործ է հարուցվել քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով եւ 113-րդ հոդվածի 1-ին մասով: Քրեական գործը հարուցվել է սպանության հատկանիշներով: Մեղադրյալ է ճանաչվել Միասնիկ Անդրանիկի Խաչումյանը՝ զորամասի 4-րդ ՀԳ 3-րդ ՀՎ 1-ին ՀՂ 3-րդ ջոկատի զինծառայող: Վերջինս դատապարտվել է 12 տարի ազատազրկման: Զոհվածի մայրը գտնում է, որ իրական մեղավորները չպատժվեցին:

Որպես փոխհատուցում՝ զոհվածի ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 300.000 դրամ: Ներկայում ընտանիքը ստանում է ամսական 23.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 051:

ՍԱՐՈ ԱՐՏՅՈՄԻ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Ծնվել է 1993 թվականին: Բնակվել է Գյումրիում՝ Գոգոլի փողոց, տուն՝ 58 հասցեում: Զորակոչի ժամանակ եղել է Երեւանի Եվրոպական ակադեմիայի 2-րդ կուրսի ուսանող:

ՀՀ բանակ է զորակոչվել 2011 թվականի դեկտեմբերին, Գյումրու զինկոմիսարիատից: Առողջական վիճակը եղել է լավ: Ծառայել է Հադրութի զորամասերից մեկում:

Մահացել է 2012 թվականի հունիսի 1-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում ինքնասպանությունը: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (ինքնասպանության հասցնել): Հարազատները հրաժարվել են տեղեկություն տրամադրել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 052:

ՀՐԱՉՅԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ծնվել է 1983 թվականի դեկտեմբերի 21-ին՝ Գյումրիում: Բնակվել է Պարույր Սեւակ փողոց, շ. 3, բն. 11 հասցեում՝ ծնողների հետ: Բանակ զորակոչվելիս Հրաչյան ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

2005 թվականի հուլիսի 30-ին, Վազգեն Սարգսյան ռազմական ինստիտուտից, անցել է ծառայության՝ ՀՀ բանակում: Ծառայել է Մարտակերտում՝ Տոնաշենի զորամասում:

Հրաչյա Սուքիասյանը մահացել է 2005 թվականի սեպտեմբերի 9-ի լուսադեմին, դիվիզիայում, պաշտոնական վարկածի համաձայն՝ ծառայողական պարտականությունները կատարելիս: Սակայն մայրը՝ Վարդանուշ Սուքիասյանը, պնդում է, որ որդուն դիտավորյալ են սպանել: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ 373-րդ հոդվածի 3-րդ մասով: Հոդվածը սահմանում է, որ զենքի, ռազմամթերքի, ինչպես նաեւ ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է թեթեւ կամ միջին ծանրության վնաս՝ պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր վնաս կամ առաջացրել է ռազմական տեխնիկայի ոչնչացում կամ այլ ծանր հետեւանքներ՝ պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Դատական գործը լսվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավորներ Լ.Աթայանի եւ Հայկ Հարությունյանի նախագահությամբ: Դատավարության հետ կապված այլ մանրամասներ սպանվածի մայրը չի հիշել:

Ընտանիքը ստացել է միայն միանվագ գումար, որի չափը չի մտաբերել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 053:

ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1980 թվականի մարտի 26-ին՝ Շիրակի մարզի Արեւշատ գյուղում: Ապրել է ծնողների, քրոջ եւ եղբոր հետ՝ գյուղում: Բանակ զորակոչվելիս Արթուրն ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքի սոցիալական վիճակը, հարազատների բնորոշմամբ, եղել է լավ:

Ա.Կարապետյանը ՀՀ բանակ է զորակոչվել 1998 թվականի հունիսի 1-ին՝ Արթիկի զինկոմիսարիատից: Զորակոչի ժամանակ առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Քանաքեռի զորամասում, որտեղ եւ 1998 թվականի հոկտեմբերի 21-ին մահացել է:

Որպես մահվան պաշտոնական պատճառ՝ նշվել է գլխուղեղի սալջարդը, բազմաբեկորային կոտրվածքը: Մահվան առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Դատավարությունն ընթացել է Երեւանում ու գործի մանրամասներից մայրը՝ Գոհար Կարապետյանը, գրեթե անտեղյակ է:

Ընտանիքը՝ որպես փոխհատուցում, ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 054:

ՍՈՒՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

Ծնվել է 1954 թվականի հունվարին՝ Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղում: Ունեցել է միջնակարգ կրթություն: Ամուսնացած է եղել, ապրել է Մեծ Մանթաշի 18 փողոցի 36 տանը՝ կնոջ եւ երեք երեխաների հետ:

1991 թվականին, որպես պայմանագրային զինծառայող, Արթիկի զինկոմիսարիատից ծառայության է անցել ՀՀ բանակում: Զորակոչի ժամանակ առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Օմարի լեռներում:

Մահացել է 1996 թվականի մարտի 20-ին, հիշյալ վայրում: Մահվան պաշտոնական պատճառը ուղեղի հեմոռագիկ արյունազեղումն է եղել:

Մայրը՝ Ալվարդ Վարդերեսյանը, որեւէ տեղեկություան չի հաղորդել, արդյո՞ք մահվան առնչությամբ քրեական գործ հարուցվե՞լ է, թե՞ ոչ: Չի հիշում նաեւ ՊՆ-ի կողմից տրված փոխհատուցման գումարը: Միայն նշել է, որ ստանում են ամսական 11.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 055:

ՎԱՂԱՐՇԱԿ ՖԵՐԴԻՆԱՆՏԻ ՆԻԿՈԼՅԱՆ

Ծնվել է 1977 թվականի նոյեմբերի 19-ին, Շիրակի մարզի Արթիկ քաղաքում: Բնակվել է Շինարարների 7, բն.15 հասցեում՝ ծնողների եւ երկու եղբոր հետ: Զորակոչվելիս Վաղարշակն ունեցել է միջնակարգ կրթություն:

1995 թվականի դեկտեմբերին Վաղարշակ Նիկոլյանը Արթիկի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Զորակոչի ժամանակ առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Սյունիքի մարզում՝ Գորիսում:

Վաղարշակը մահացել է 1997 թվականի հուլիսի 30-ին՝ ծառայողական պարտականությունները կատարելիս՝ ավտոմեքենայի վթարից: Հարուցվել է քրեական գործ, սակայն հարազատները չեն հիշել, թե ինչ հոդվածով: Դատապարտվել է վթարի ենթարկված մեքենայի վարորդը:

Մոր՝ Լիզա Նիկոլյանի փոխանցմամբ՝ ընտանիքը ստանում է 10.000 ՀՀ դրամ ամսական փոխհատուցում, 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 056:

ՀԱՅԿ ՄՈՎՍԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1993 թվականի հունիսի 1-ին՝ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում: Հայկն ապրել է ծնողների եւ տատիկի հետ: 2011 թվականի հունիսի 1-ին Արթիկի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ՝ ուսումն անավարտ թողնելով: Զորակոչի ընթացքում առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է Նուբարաշենի զորամասում:

Մահացել է 2011 թվականի դեկտեմբերի 31-ին՝ Մուրացանի հիվանդանոցում: Որպես մահվան պաշտոնական պատճառ՝ նշվում է ջրծաղիկը: Սակայն մահացածի տատիկը՝ Աիդա Ավագյանը, պնդում է, որ Հայկը մահացել է սխալ բուժման հետեւանքով. ջրծաղիկի փոխարեն դիմային նյարդի բուժում են կատարել: Մահվան առնչությամբ հարուցվել է քրեական գործ ու այժմ էլ ընթացքի մեջ է: Գործով կասկածյալներն են Մինաս Սերգեյի Մկրտչյանը եւ Միքայել Ժորայի Միքայելյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 057:

ՌԱԶՄԻԿ ԼՈՒԿԱՇԻ ԹՈՐՈՍՅԱՆ



Ծնվել է 1956 թվականի հոկտեմբերի 5-ին՝ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում: Ապրել է կնոջ եւ դստեր հետ: Ծառայության անցնելիս ունեցել է ութնամյա կրթություն:

1993 թվականին Արթիկի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Ծառայել է ԼՂՀ-ի զորամասերից մեկում: Ռազմիկ Թորոսյանը մահացել է 1996 թվականի հոկտեմբերի 8-ին՝ Վեդիում: Մահվան պաշտոնական պատճառը հարվածից առաջացած գանգի փակ, բութ վնասվածքն է: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ կնոջ՝ Հայկանուշ Թորոսյանի, ընտանիքն ստացել է 70.000 դրամ միանվագ գումար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 058:



ԳԱԳԻԿ ԱԼՄԱԴՈՒՆՈՒ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1961 թվականի հուլիսի 9-ին՝ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում: 1993 թվականին Արթիկի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Զորակոչվելիս որեւէ առողջական խնդիր չի ունեցել: Ծառայել է Մարտակերտում:

Գագիկ Սարգսյանը մահացել է 2004 թվականի հուլիսի 10-ին՝ Երեւանի հոսպիտալում՝ մարտական առաջադրանք կատարելիս ստացած վնասվածքից: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Հոր՝ Ալմադունի Սարգսյանի խոսքերով, ընտանիքը, որպես փոխհատուցում, ստանում է ամենամսյա 31.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 059:

ՎԱՀԱԳՆ ԱԼԵՔՍԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Ծնվել է 1952 թվականի փետրվարի 8-ին՝ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում: Ունեցել է բարձրագույն կրթություն: Ապրել է ծնողների, տատիկի, պապիկի, երկու եղբոր, երեք քույրերի հետ: Վահագն Սահակյանն ունի երեք հաշմանդամ որդի:

1994 թվականի աշնանը Արթիկի զինկոմիսարիատից նա զորակոչվել է բանակ: Առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է Մարտակերտի շրջանում:

Մահացել է Երեւանի հոսպիտալում՝ 2003 թվականի փետրվարի 16-ին՝ հրազենային վնասվածքից:

Մահվան առնչությամբ քրեական գործ չի հարուցվել, ընտանիքին չի տրվել նաեւ գումարային փոխհատուցում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 060:

ՆԵՐՍԵՍ ՎԱԼԵՐԻԿԻ ԳԱԼՈՅԱՆ

Ծնվել է 1990 թվականի դեկտեմբերի 11-ին, Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում: Ապրել է գյուղում՝ ծնողների եւ երկու եղբոր հետ: Ներսեսը բանակ է մեկնել՝ անավարտ թողնելով ուսումը:

Զորակոչվել է 2008 թվականի դեկտեմբերին՝ Արթիկի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Ջաբրահիլի զորամասում:

Ներսես Գալոյանը մահացել է 2010 թվականի նոյեմբերի 19-ին՝ դիրքերում: Մահվան պաշտոնական պատճառը սպանությունն է եղել՝ հրազենի վնասվածքից:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Ըստ հարազատների՝ մեղադրվել են ճիշտ մարդիկ: Դատավորը Հ.Դավթյանն է եղել, իսկ Վերաքննիչ դատարանի դատավորները՝ Ա.Դանիելյանը, Մ.Արղամանյանը, Մ.Ռեհանյանը: Էդմոն Մարուքյանը եւ Կարեն Թումանյանը հակառակ կողմի պաշտպաններն են եղել: Դատավարության հետագա ընթացքից սպանվածի եղբայրը՝ Նարեկ Վալերիկի Գալոյանը, որեւ այլ տեղեկության չի տիրապետել:

Ընտանիքը՝ որպես փոխհատուցում, զինկոմից ստացել է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 061:

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՇՈՏԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծնվել է 1977 թվականի նոյեմբերի 5-ին: Բնակվել է Շիրակի մարզի Մայիսյան գյուղում: Ընտանիքը բաղկացած է եղել 6 անձից, սոցիալական պայմանները եղել են նորմալ: Ունեցել է ութնամյա կրթություն:

ՀՀ բանակ զորակոչվել է 1995 թվականի նոյեմբերին, Ախուրյանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս եղել է առողջ: Ծառայել է Կրասնոսելսկի շրջանում:

1996 թվականի փետրվարի 1-ից համարվում է անհայտ կորած՝ Կրասնոսելսկի շրջանի դիրքերից գերի է տարվել ադրբեջանական զինուժի կողմից եւ անհայտ կորել է:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 1.800.000 դրամ: Հիմա ծնողները ամսական ստանում են 54.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 062:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՄՎԵԼԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ծնվել է 1973 թվականի հունվարի 9-ին: Բնակվել է Շիրակի մարզի Ջաջուռ գյուղում: Հ.Դանիելյանը զորակոչման ժամանակ ունեցել է բարձրագույն կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 6 անձից:

Բանակ զորակոչվել է Ախուրյանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական վիճակը լավ է եղել: Ծառայել է Հորադիսում:

Մահացել է Հորադիսի խրամատներում, 1997 թվականին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում դիտավորյալ սպանությունը: Զոհվածի հորեղբոր տղան պատմում է, որ խրամատ փորելիս նույն զորամասի զինծառայողը բահով կտրել է Հովհաննեսի վիզը: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, վերը նշված զինծառայողը դատապարտվել է ազատազրկման եւ մինչեւ հիմա կրում է իր պատիժը:

Զոհվածի հորեղբոր տղան նշում է, որ չգիտի՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից փոխհատուցում ստացել է, թե՞ ոչ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 063:

ՌՈԼԱՆԴ ՌՈՒԲԵՆԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

Ծնվել է 1972 թվականի սեպտեմբերին: Բնակվել է Գյումրիում՝ Սեւյան 1-ին նրբանցք, տուն 10 հասցեում: Ունեցել է բարձրագույն կրթություն:

Գյումրու զինկոմիսարիատից մեկնել է պայմանագրային ծառայության: Եղել է առողջ: Ծառայել է Վարդենիսի զորամասում:

Մահացել է 2008 թվականի նոյեմբերի 26-ին, Երեւանի ուռուցքաբանական կենտրոնում, արյան քաղցկեղից:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 064:

ՆՈՒՐԻՆԲԵԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԵՐՈԲՅԱՆ

Ծնվել է 1959 թվականին: Բնակվել է Շիրակի մարզի Սարագյուղ գյուղում՝ 3-րդ փողոց, 3-րդ տուն հասցեում: Ընտանիքը բաղկացած է եղել 5 անձից: Ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

ՀՀ բանակ զորակոչվել է 1994 թվականի հոկտեմբերի 23-ին, Աշոցքի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս եղել է առողջ: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Ֆիզուլիում:

Մահացել է դիպուկահարի կրակոցից, 1994 թվականի նոյեմբերի 2-ին, Ֆիզուլիում:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 100.000 դրամ, իսկ հիմա ամսական ստանում է 10.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 065:

ԴԵՐԵՆԻԿ ԱԼԵՔՍԱՆԻ ՔԱԼԱՇՅԱՆ

Ծնվել է 1978 թվականի դեկտեմբերի 25-ին: Բնակվել է Շիրակի մարզի Աշոցք գյուղում՝ 2-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 4 տուն հասցեում: Ընտանիքը բաղկացած է եղել 5 անձից, բնակվել է ծանր սոցիալական պայմաններում: Զորակոչվելիս եղել է Նինոցմինդայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող:

ՀՀ բանակ է զորակոչվել 1997 թվականի դեկտեմբերի 26-ին, Աշոցքի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջ է եղել: Ծառայել է Ղափանում, ապա ԼՂՀ-ում՝ Հորադիսում:

Մահացել է Հորադիսի հոսպիտալում, 1999 թվականի մարտի 23-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում հրազենով կրծքավանդակի ձախ թոքի եւ սրտի վնասվածքը: Զոհվածի հայրը՝ Ալեքսան Քալաշյանը, պատմում է, որ ծառայակցի կողմից դիտավորյալ սպանություն է կատարվել: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Մեղադրյալ է ճանաչվել համածառայակիցը՝ Գրիգոր Գոջամանյանը, ով դատապարտվել է 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Զոհվածի հայրը ՀՀ պաշտպանության նախարարությունից հատկացրած միանվագ գումարի չափը չի հիշում: Հիմա ընտանիքը ստանում է ամսական 30.000 դրամ նպաստ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 066:

ՀՈՎԻԿ ՄԿՐՏՉԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ծնվել է 1986 թվականի օգոստոսի 1-ին՝ Շիրակի մարզի Բանդիվան գյուղում: Զորակոչվելիս ապրել է կնոջ հետ: Ունեցել է բարձրագույն կրթություն:

2007 թվականի օգոստոսի 1-ին Հովիկ Սուքիասյանը Վազգեն Սարգսյան ինստիտուտից կամավոր զորակոչվել է ՀՀ բանակ: Առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Հադրութի շրջանի Մեխակավան գյուղի զորամասում:

Մահացել է 2011 թվականի հունվարի 20-ին՝ դիրքերում: Դեպքը տեղի է ունեցել մարտական հերթապահության ժամանակ՝ դիպուկահարի գնդակից: Մահվան առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Սպանվածի ընտանիքը, որպես փոխհատուցում ստացել է միանվագ 2.100.000 դրամ եւ ստանում է 10.000 դրամ փոխհատուցում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 067:



ՄՈՒՐԱԴ ԱՐՔԻՄԵԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1960 թվականի նոյեմբերի 30-ին, Շիրակի մարզի Ջաջուռ գյուղում: Ապրել է ծնողների, կնոջ եւ երեք երեխաների հետ: Ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքի սոցիալական վիճակը շատ ծանր է եղել:

1994 թվականի ապիլի 18-ին, Ախուրյանի զինկոմիսարիատից, Մուրադը կամավոր զորակոչվել է ՀՀ բանակ: Ծառայել է Մանվել Գրիգորյանի ջոկատում: Մահացել է 2009 թվականի հունվարի 13-ին՝ տանը, ինֆարկտից (արձակուրդում է եղել):

Հոր՝ Արքիմեդ Հարությունյանի վստահեցմամբ, ընտանիքը՝ որպես դրամական փոխհատուցում, ստացել է միայն 50.000 դրամ միանվագ գումար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 068:

ԱՐՄԵՆ ՍԵՅՐԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1990 թվականի փետրվարի 18-ին: Բնակվել է Շիրակի մարզի Բյուրակն գյուղում: Զորակոչման ժամանակ ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից: Ունեցել է բարձրագույն կրթություն:

ՀՀ բանակ զորակոչվել է Ախուրյանի զինկոմիսարիատից, 2010 թվականի ապրիլին: Զորակոչվելիս եղել է առողջ: Ծառայել է Երեւանում՝ Քանաքեռի զորամասում:

Մահացել է 2012 թվականի սեպտեմբերի 9-ին՝ ժամը 02:15-ին: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում ինքնասպանությունը: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով. գործի քննությունը շարունակվում է:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 069:

ՌԱՖԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Ծնվել է 1989 թվականի հունվարի 25-ին՝ Շիրակի մարզի Բայանդուր գյուղում: Զորակոչի ժամանակ Ռաֆայելն ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից:

2007 թվականի մայիսի վերջերին Ախուրյանի զինկոմիսարիատից Ռաֆայել Հարությունյանը զորակոչվել է ՀՀ բանակ: Առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Հայկազովի զորամասում՝ որպես շարքային զինծառայող:

Մահացել է 2008 թվականի օգոստոսի 4-ին հիշյալ զորամասում: Մահվան դեպքը որակվել է հեմոռագիկ շոկ՝ սպանություն հրազենով: Հարուցվել է քրեական գործ: Դատաքննությունն ընթացել է Գորիսում: Մեղադրյալը հրազդանցի է եղել, որի անունը սպանվածի տատը՝ Էլմիրա Սահակյանը, չի հիշել: Դատավարության հետ կապված այլ մանրամասների եւս Է.Սահակյանը չի տիրապետել:

Որպես փոխհատուցում՝ սպանվածի ընտանիքն ստացել է 2.400.000 դրամ միանվագ նպաստ եւ 15.000 դրամ ամսական թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 070:

ՎԱՀԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բանակ է զորակոչվել 2000 թվականին, Գյումրու զինկոմիսարիատից: Մահացածի մասին որեւէ այլ տեղեկություն հարազատները չեն ցանկացել տրամադրել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 071:

ՀԱԿՈԲ ՍԱՄՎԵԼԻ ՓԻԼՈՍՅԱՆ

Ծնվել է 1985 թվականի նոյեմբերի 19-ին՝ Շիրակի մարզի Հովտաշեն գյուղում: Ապրել է ծնողների, քրոջ եւ եղբոր հետ: Հակոբն ունեցել է միջնակարգ կրթություն:

2003 թվականի նոյեմբերի 24-ին Արթիկի զինկոմիսարիատից Հակոբ Փիլոսյանը զորակոչվել է ՀՀ բանակ, առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Մատաղիսում:

Մահացել է 2004 թվականի նոյեմբերի 21-ին՝ Թալիշի ճանապարհին՝ ավտովթարից: Մահվան առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Հայրը՝ Սամվել Փիլոսյանը, դատավարությունից մանրամասներ չի հիշում, չի հիշում նաեւ դատապարտվածի անունը, բայց գիտի, որ Մարտակերտից էր եւ դատապարտվել է տասը տարվա ազատազրկման:

Ընտանիքը ստացել է 5.000 դոլար, 500.000 դրամ միանվագ փոխհատուցում եւ 30.000 դրամ ամենամսյա թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 072:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՈՒՐԵՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1984 թվականի նոյեմբերի 21-ին Շիրակի մարզի Արթիկ քաղաքում: Ապրել է Գարեգին Նժդեհի փողոցում, 1շ., բն. 6 հասցեում՝ ծնողների եւ եղբոր հետ: ՀՀ բանակ զորակոչվելիս Արամայիսն ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքի սոցիալական վիճակը, հարազատների բնորոշմամբ, եղել է միջին:

2002 թվականի նոյեմբերի 26-ին Արթիկի զինկոմիսարիատից Արամայիս Ավետիսյանը զորակոչվել է ՀՀ բանակ: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Գյումրու զորամասում:

Արամայիսը մահացել 2003 թվականի հոկտեմբերի 21-ին՝ զորամասում: Մահվան պաշտոնական պատճառը սպանությունն է եղել: Հարուցվել է քրեական գործ: Մեղադրյալները դատապարտվել են երկու տարի ազատազրկման, սակայն մայրը՝ Հասմիկ Ավետիսյանը՝ չի հիշում, թե ինչ հոդվածներով: Դատավորը Կարեն Հովհաննիսյանն է եղել, քննիչը՝ Արմեն Խաչատրյանը:

Ընտանիքը զինկոմիսարիատից ստանում է ամենամսյա 30.000 դրամ թոշակ՝ որպես փոխհատուցում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 073:

ԱՐՍԵՆ ՄԱՆՎԵԼԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1980 թվականի սեպտեմբերի 17-ին՝ Շիրակի մարզի Արթիկ քաղաքում: Ունեցել է բարձրագույն կրթություն: Բանակ զորակոչվելու ընթացքում Արսենի ընտանիքը կազմված է եղել 4 անձից:

2002 թվականի մայիս-հունիս ամիսներին Արսեն Մաթեւոսյանը Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտից, որպես պայմանագրային զինծառայող, ծառայության է անցել ՀՀ բանակում: Առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է Լուսակերտի ուսումնական զորամասում, ունեցել է մայորի զինվորական կոչում:

Մահացել է 2010 թվականի մարտի 30-ին, Արարատի մարզի Սեւակավան գյուղում՝ ավտովթարից: Մահվան պատճառն եղել է տրավմատիկ հեմոռագիկ շոկը: Քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մահացածի հոր՝ Մանվել Մաթեւոսյանի, ընտանիքը, որպես փոխհատուցում, ստացել է միանվագ 2 մլն ՀՀ դրամ, ինչպես նաեւ 55.000-60.000 դրամ ամսական թոշակ՝ ծնողների եւ 70.000 դրամ ամսական թոշակ՝ երեխաների համար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 074:

ՏԱՐՈՆ ՍԱՄՎԵԼԻ ԱԼՈՅԱՆ

Ծնվել է 1990 թվականի նոյեմբերի 21-ին: Բնակվել է Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Սպանդարյան փողոց 13 տանը: Ընտանիքը բաղկացած է եղել 5 անձից: Ունեցել է միջնակարգ կրթություն: Զորակոչվել է 2008 թվականի նոյեմբերի 25-ին, Արթիկի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջ է եղել: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Քարվաճառում (Քելբաջար):

Մահացել է 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մահվան պաշտոնական պատճառը նշվում է երկրորդային տրավմատիկ շոկը, ըստ տեղեկությունը տրամադրողների, կատարվել է դիտավորյալ սպանություն: Հարուցվել է քրեական գործ, դատական գործը լսվել է Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում: Մեղադրյալ, Տարոնի համածառայակից Զաքար Զոհրաբյանը դատապարտվել է ցմահ ազատազրկման:

Տարոն Ալոյանի ընտանիքը, որպես փոխհատուցում, ՊՆ կողմից, միանվագ ստացել է 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես հուղարկավորության ծախս: Ներկայումս ծնողները ստանում են 30.000 դրամ թոշակ, որից 10.000 դրամը փոխհատուցվում է նրանց որդու կորստյան համար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 075:

ՏԻԳՐԱՆ ՍՏԵՓԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ծնվել է 1979 թվականի հունվարի 4-ին՝ Շիրակի մարզի Ղազանչի գյուղում: Բանակ զորակոչվելիս Տիգրանն ունեցել է միջնակարգ կրթություն: Մելքոնյանների ընտանիքի սոցիալական վիճակը բնորոշվել է միջին:

1997 թվականի ապրիլի 23-ին Աշոցքի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Առողջական խնդիրներ չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Ստեփանակերտի կենտրոնական զորամասում:

Տիգրան Մելքոնյանը մահացել է 1998 թվականի մարտի 19-ին՝ Մատաղիսում: Մահվան պաշտոնական պատճառը գլխուղեղի կենսական կարեւոր ֆունկցիաների խանգարումն է եղել, հրազենային վնասվածքը՝ հակառակորդի գնդակից: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Որպես փոխհատուցում ստացած միանվագ նպաստի չափը սպանվածի մայրը՝ Մանիկ Մելքոնյանը, չի հիշել: Ընտանիքը ստանում է նաեւ ամսական 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 076:

ՀԱՄԼԵՏ ԳՈՒՐԳԵՆԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ծնվել է 1981 թվականի դեկտեմբերի 9-ին՝ Շիրակի մարզի Աշոցք (Ղուկասյան) համայնքում, ընտանիքը կազմված է եղել 3 անձից: Բանակ զորակոչվելիս Համլետն ունեցել է 6-ամյա կրթություն:

1999 թվականի գարնանը, Աշոցքի զինկոմիսարիատից, Հ.Նալբանդյանը մեկնել է ՀՀ բանակ՝ ունենալով առողջական խնդիրներ (տառապել է հայկական հիվանդությամբ): Ծառայել է Քարվաճառում (Քելբաջար), որտեղ եւ 2000 թվականի օգոստոսի 11-ին մահացել է:

Որպես մահվան պաշտոնական պատճառ՝ նշվել է ինքնասպանությունը: Հարազատները, սակայն, պնդում են, որ կատարվածը դիտավորյալ սպանություն է: Մահվան առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Դատավարությունն ընթացել է Երեւանում: Մոր՝ Ռոզա Վարոսյանի հավաստմամբ, դատապարտվել է սպաներից մեկը: Դատավարությունից այլ մանրամասներ սպանվածի մայրը չի հիշել:

Ընտանիքը որեւէ փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 077:

ԱՐՏԱՎԱԶԴ ՄԻՇԱՅԻ ԳԱԼՈՅԱՆ

Ծնվել է 1952 թվականի օգոստոսի 10-ին՝ Գյումրիում: Բնակվել է Սեւյան փող., 27 շենքի 23 բնակարանում՝ կնոջ եւ երկու որդիների հետ: Ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

1994 թվականի աշնանը Գյումրու զինկոմիսարիատից մեկնել է ՀՀ բանակ: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Քարվաճառում (Քելբաջար): Մահացել է 1994 թվականի նոյեմբերի 21-ին՝ ԼՂՀ Քաշաթաղ գյուղում՝ հակառակորդի գնդակից: Մահվան պաշտոնական պատճառը գանգուղեղային ծանր վնասվածքն է: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Կինը՝ Մարիամ Գալոյանը, ընտանիքին տրված միանվագ գումարի չափը չի հիշում, բայց նշել է, որ ամեն ամիս ստանում են 10.000 դրամ փոխհատուցում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 078:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է Գյումրիում, բնակվել Երեւանյան խճուղու 140/008 տնակում՝ ծնողների եւ եղբոր հետ:

2011 թվականի դեկտեմբերի 29-ին Գյումրու զինկոմիսարիատից Արմեն Հարությունյանը զորակոչվել է բանակ, սակայն, ինչպես նշել են հարազատները, քաշը պակաս է եղել, հասակը՝ կարճ:

Ծառայել է ԼՂՀ-ում՝ Հադրութի շրջանի զորամասում: Մահացել է հիշյալ վայրում՝ 2012 թվականի մայիսի 17-ին: Ստացել է դեմքի, պարանոցի, կրծքավանդակի, որովայնի, զույգ վերին եւ զույգ ստորին վերջույթների համակցված ականապայթյունային վնասվածք: Դեպքի հետ կապված այլ մանրամասներ հարազատները չեն ցանկացել ներկայացնել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 079:

ԱՐՄԵՆ ՀԱՄԼԵՏԻ ՄՈՂՐՈՎՅԱՆ

Ծնվել է 1992 թվականի օգոստոսի 1-ին: Բնակվել է Արթիկ քաղաքում՝ Անկախության 16 շենք, բնակարան՝ 4 հասցեում: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

ՀՀ բանակ է զորակոչվել 2000 թվականի նոյեմբերի 28-ին, Արթիկի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջ է եղել: Ծառայել է Հադրութի զորամասում:

Մահացել է 2011 թվականի հոկտեմբերի 29-ին, Հադրութի զորամասում: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում արյան շրջանառության սուր խանգարումը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 080:

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՎԵԼԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Ծնվել է 1992 թվականի մայիսի 7-ին: Բնակվել է Արթիկ քաղաքում: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից, սոցիալական պայմանները ծանր են եղել: Ունեցել է միջնակարգ կրթություն:

ՀՀ բանակ զորակոչվել է 2010 թվականի հունիսի 7-ին, Արթիկի զինկոմիսարիատից, զորակոչվելիս առողջ է եղել: Ծառայել է Հադրութում:

Մահացել է 2012 թվականի հուվարի 17-ին, տանը: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում ոսկրային քաղցկեղը: Զոհվածի մայրը՝ Աիդա Սահակյանը, պատմում է, որ որդին 15 օր պառկել է Ստեփանակերտի հոսպիտալում, որից հետո տեղափոխել են Երեւանի Մուրացանի զինվորական հոսպիտալ, ուռուցքաբանական հիվանդանոցում 10 օր մնալուց հետո զորացրել են եւ ուղարկել տուն:

ՀՀ Պաշտպանության նախարարությունից՝ որպես փոխհատուցում, ընտանիքը ստացել է 1.400. 000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 081:

ԱՐԱՅԻԿ ԳԵՎՈՐԳԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Բնակվել է Արթիկ քաղաքում: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

ՀՀ բանակ զորակոչվել է 1997 թվականին, Արթիկի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս եղել է առողջ: Ծառայել է ԼՂՀ-ում:

Մահացել է ԼՂՀ դիրքերում, 1998 թվականի հունիսի 10-ին՝ հացի մեքենայից հացն իջեցնելու ժամանակ՝ թշնամու գնդակից:

Զոհվածի հորեղբոր կինը՝ Ժենյա Առաքելյանը, ասում է, որ, ինչքան հիշում է, ՀՀ պաշտպանության նախարարությունն ընտանիքին միանվագ օգնություն չի հատկացրել: Հիմա ընտանիքը ստանում է 30.000 դրամ նպաստ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 082:



ԱՐՄԵՆ ՎԱՐԴԳԵՍԻ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

Ծնվել է 1981 թվականի նոյեմբերի 3-ին: Բնակվել է Արթիկ քաղաքում՝ Սասունցի Դավիթ՝ 11/3: Ընտանիքը բաղկացած է եղել 7 անձից, սոցիալական պայմանները նորմալ են եղել: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

ՀՀ բանակ զորակոչվել է 1999 թվականի նոյեմբերի 25-ին, Արթիկի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջ է եղել: Ծառայել է Խոջալուում, հետո Մատաղիսում:

Մահացել է 2000 թվականի մայիսի 17-ին: Խեղդվել է Թարթառ գետում: Դեպքի առնչությամբ գործ է հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 100-րդ հոդվածով:

Ընտանիքը որպես փոխհատուցում, ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել է 1.000 ԱՄՆ դոլար: Հիմա ստանում է ամսական 30.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 083:

ԱՐՄԵՆ ՌԱՖԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1989 թվականի ապրիլի 12-ին: Բնակվել է Գյումրիում, տնակ 231/101ա: Զորակոչվելիս Գյուղատնտեսական քոլեջի ուսանող է եղել:

ՀՀ բանակ զորակոչվել է Գյումրու զինկոմիսարիատից, 2007 թվականի մայիսի 22-ին: Զորակոչվելիս առողջ է եղել: Ծառայել է Հադրութում:

Մահացել է դիրքերում: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում դիպուկահարի կրակոցը: Ըստ հարազատների, զինծառայողներից մեկի կամ անմիջական ղեկավարի միջեւ վիճաբանություն է տեղի ունեցել եւ կրակել են նրա վրա: Արմենն այդ օրը դիրքերում չպիտի լիներ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 084:

ԱՐՏՈՒՇ ՍՄԲԱՏԻ ԻԳԻԹՅԱՆ

Բնակվել է Արթիկ քաղաքում: Զորակոչվել է Արթիկի զինկոմիսարիատից: Պաշտոնապես համարվում է անհայտ կորած:

Այլ տեղեկություններ չհաջողվեց ճշտել՝ ծնողների քաղաքից բացակայելու պատճառով:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 085:

ՍԵՐՅՈԺԱ ԳԵՐԱՍԻՄԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծնվել է 1949 թվականի հուլիսի 1-ին: Բնակվել է Գյումրի քաղաքում, Աղայան 66 հասցեում: Ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից, սոցիալական պայմանները ծանր են եղել: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

ՀՀ բանակ զորակոչվել է Գյումրու զինկոմիսարիատից՝ 1994 թվականի ապրիլին: Զորակոչվելու ժամանակ առողջ է եղել: Ծառայել է Մարտակերտում:

Մահացել է 1996 թվականի հունիսի 16-ին, Մուրացանի զինվորական հոսպիտալում: Մահվան պաշտոնական պատճառ է նշվում թոքային զարկերակի թրոմբոէմբորիան: Դիրքերից իջնելու ժամանակ մեքենան շրջվել է, որի ժամանակ Ս.Հակոբյանը ստացել է կոտրվածքներ: Նրան տեղափոխել են Ստեփանակերտի հոսպիտալ, որից հետո Երեւանի Մուրացանի հոսպիտալ, որտեղ մեկ ու կես տարի բուժում ստանալուց հետո հենց հոսպիտալում էլ մահացել է:

Որպես փոխհատուցում՝ ընտանիքը ՀՀ Պաշտպանության նախարարությունից միանվագ ստացել է 450.000 դրամ: Հիմա ամսական ստանում է 10.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 086:

ԼԻՊԱՐԻՏ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԽԱԺԱԿՅԱՆ

Ծնվել է 1954 թվականի հուլիսի 8-ին: Բնակվել է Գյումրի քաղաքում, Ղուկասյան 90 հասցեում: Ընտանիքը բաղկացած է եղել 3 անձից: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

ՀՀ բանակ ծառայության է մեկնել որպես պայմանագրային զինծառայող: Առողջ է եղել: Ծառայել է Ջաբրահիլում:

Մահացել է 2003 թվականի հունվարի 21-ին՝ Ջաբրահիլում՝ ծառայողական պարտականությունները կատարելիս:

Զոհվածի մայրը՝ Ծովիկ Խաժակյանը, ՀՀ պաշտպանության նախարարությունից հատկացված միանվագ գումարի չափը չի հիշում: Հիմա ընտանիքը ամսական ստանում է 51.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 087:

ՀՈՎՍԵՓ ԿԱՐԼԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1978 թվականի ապրիլի 30-ին՝ Գյումրիում: Բնակվել է Պարույր Սեւակ, շ. 3, բն. 25 հասցեում՝ ծնողների եւ եղբոր հետ, ունեցել է միջնակարգ կրթություն:

1996 թվականի դեկտեմբերի 30-ին Հովսեփը Գյումրու զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ՝ չունենալով առողջական որեւէ խնդիր: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Մարտակերտում: Հ.Կարապետյանը մահացել է 2008 թվականի մարտի 14-ին Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում: Մահվան պաշտոնական պատճառը ձախ թոքի ընդլայնված թոքաբորբն է եղել: Մահվան առիթով քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մահացածի մոր՝ Էլմիրա Կարապետյանի, որպես փոխհատուցում ընտանիքն ստացել է միանվագ մոտ 2 մլն. ՀՀ դրամ: Զինկոմից եւս ամենամսյա թոշակ են ստանում, որի հստակ չափը մայրը չգիտի, որովհետեւ ստանում է ծերության թոշակի հետ միասին:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 088:

ՄԱՆՎԵԼ ԱՇՈՏԻ ՄԱՅԼԱՄՅԱՆ

Ծնվել է 1957 թվականի դեկտեմբերի 15-ին: Բնակվել է Գյումրի քաղաքում՝ Արվելաձե 69 հասցեում: Ընտանիքը բաղկացած է եղել 5 անձից, սոցիալական պայմանները եղել են նորմալ: Ունեցել է բարձրագույն կրթություն:

Զորակոչվել է Գյումրու զինկոմիսարիատից: Ծառայել է Հայկավանի զորամասում (Բերբերյանի):

Մահացել է Հայկավանի զորամասում, 1995 թվականի օգոստոսի 15-ին, ծառայողական պարտականությունները կատարելիս:

Զոհվածի դուստրը՝ Քրիստինա Մայլամյանը, ՀՀ պաշտպանության նախարարության հատկացրած միանվագ գումարի չափը չի հիշում: Հիմա ընտանիքն ամսական ստանում է 30 000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 089:

ՆԻԿՈԼ ՌՈԲԻՆԶՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ծնվել է 1978 թվականի հուլիսի 30-ին, Ղուկասյանի շրջանի Բավրա գյուղում: Զորակոչվելիս Նիկոլ Ստեփանյանն ունեցել է ութնամյա կրթություն, ապրել է ծնողների, քրոջ եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ:

1997 թվականի հոկտեմբերին Նիկոլը Աշոցքի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ բանակ: Ֆիզիկապես առողջ է եղել: Ծառայել է ԼՂՀ-ում: Մահացել է 1998 թվականի օգոստոսի 14-ին՝ Ագարակ գյուղում: Որպես մահվան պաշտոնական պատճառ՝ նշվում է ձուկ որսալու ընթացքում հոսանքահարվելը: Սակայն մայրը՝ Ռեբեկա Ստեփանյանը, պնդում է, որ որդուն սպանել են: Մահվան առնչությամբ հարուցվել է քրեական գործ, սակայն մայրը չի մասնակցել գործի քննությանը, ուստի դատավարության ընթացքից մանրամասների չի տիրապետում:

Զոհվածի ընտանիքը, որպես փոխհատուցում, ստացել է միանվագ գումար, որի չափը մայրը չի հիշում, եւ 20.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 090:

ՍԱՄՎԵԼ ՄԱՐՏԻՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Ծնվել է 1956 թվականի մայիսի 17-ին՝ Լենինականում: Բնակվել է Շիրակի մարզի Լեռնուտ գյուղում՝ կնոջ եւ երեք երեխաների հետ: Ունեցել է միջին մասնագիտական կրթություն: Ընտանիքն ապրել է սոցիալապես վատ պայմաններում:

1995 թվականի հուլիսին Գյումրու զինկոմիսարիատից Սամվել Մկրտչյանը կամավոր մեկնել է բանակ, ծառայել ԼՂՀ-ում՝ որպես շարքային զինվոր:

Մահացել է 1995 թվականի նոյեմբերի 17-ին՝ ժամը 13-ի սահմաններում՝ թշնամու գնդակից: Դեպքը տեղի է ունեցել մարտական առաջադրանք կատարելիս՝ խրամատ փորելիս: Մահվան առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ընտանիքը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ստացել է միանվագ դրամական օգնություն, որի չափը մահացածի քույրը չի հիշել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 091:



ԳԱՎՐԻԿ ԳԱՌՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1943 թվականի փետրվարի 13-ին՝ Գյումրու «Ստրոմմաշինա» տնակային ավանում: Գավրիկն ունեցել է միջնակարգ կրթություն: Ընտանիքը բաղկացած է եղել 2 անձից: Մինչ զորակոչվելը աշխատել է Գյումրու մսի կոմբինատում:

1991 թվականի աշնանը Գյումրու զինկոմիսարիատից նա զորակոչվել է ՀՀ բանակ՝ չունենալով առողջական որեւէ խնդիր: Ծառայել է Լեռնային Ղարաբաղում, Մարտակերտի զորամասում:

Մահացել է 2000 թվականի ապրիլի 8-ին՝ տանը, ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ ստացած վնասվածքների հետեւանքով: Կնոջ՝ Ալինա Կարապետյանի վստահեցմամբ, ընտանիքը ստացել է 200.000 ՀՀ դրամ միանվագ գումար, 30.000 ՀՀ դրամ ամսական փոխհատուցում եւ 20.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների Ասպարեզ ակումբում հաշվառված գործ՝ համար 092:



ՌԱՖԻԿ ՍԵՐԳՈՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1936 թվականի հուվարի 6-ին: Բնակվել է Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղում, 1-ին փողոց, 8-րդ տուն հասցեում: Ընտանիքը բաղկացած է եղել 11 անձից, սոցիալական պայմանները վատ են եղել: Ունեցել է միջնակարգ կրթություն:

Զորակոչվել է 1988 թվականին, Արթիկի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջ է եղել: Ծառայել է Մարտակերտում, Շուշիում, Օմարի լեռներում:

Մահացել է 2004 թվականի սեպտեմբերի 3-ին, Փոքր Մանթաշում, տանը: Մահվան պաշտոնական պատճառ նշվում է մեզենտերալանոթների թրոմբոզ, որովայնի բեկորային վնասվածք, որը ստացել է ԼՂՀ մարտերի ժամանակ, աղիների տոտալ ռեզեկցիա, հետկոնտուզիոն վիճակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հաշվառված գործ՝ համար 093:

Խնդրի մասին

հրապարակումներից քաղվածքներ

«Չարանենգորեն լափում ու հարստահարում են, ու իբր թե հոգ են տանում...»

Հայկական բանակում վերջին շրջանում կատարվող իրադարձություններին այսօր արդեն հասարակությունը «մանկասպանություն» անվանումն է տալիս: Մինչ պաշտպանության նախարարությունը շարունակում է տարածաշրջանում ամենահզոր ու կայացած բանակը ունենալու հորջորջումները, հայկական բանակում խաղաղ պայմաններում շարունակում են զոհվել ժամկետային զինծառայության մեկնած հայորդիները:

Սեպտեմբերի 7-ի առավոտյան՝ ժամը 07:00-ի սահմաններում հերթական ողբերգական դեպքն է գրանցվել. Ասկերանի մարտական հենակետերից մեկում հերթապահություն իրականացնելու ժամանակ սպանվել է Էջմիածնի զինկոմիսարիատից զորակոչված, 19-ամյա Հայկ Վասիլի Մկրտչյանը: Ըստ ԼՂՀ ՊԲ մամուլի ծառայության հաղորդագրության, ԼՂՀ Պաշտպանության բանակի ժամկետային զինծառայող Հայկ Վասիլիի Մկրտչյանը մահացել է համածառայակից, ժամկետային զինծառայող Լենդրուշ Սամվելի Նազլուխանյանի կողմից զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետեւանքով արձակված կրակոցներից՝ հրազենային գնդակային վիրավորում ստանալու հետեւանքով:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով (Զենքի, ռազմամթերքի եւ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն առաջացրել է մարդու մահ): Հարուցված քրեական գործի շրջանակում ձերբակալվել է նրա զինակիցը՝ շարքային Լենդրուշ Սամվելի Նազլուխանյանը: Նրան սեպտեմբերի 9-ին մեղադրանք կառաջադրվի դիտավորյալ սպանության համար: Նախատեսվում է պատիժ՝ երեքից յոթ տարի ազատազրկմամբ: Նախաքննությունը շարունակվում է...

...Հատկանշական է նաեւ մեր ժողովրդի ցասումն այս ամենի հանդեպ, ինչը, սակայն, չի սթափեցնում բանակի պատասխանատուներին: Հատկապես facebook սոցիալական ցանցում ըմբոստացումներն ու ամենասուր քննադատություններն այս առումով գնալով ավելի մեծ ծավալներ են ընդունում: Ստորեւ բերված են մի քանի գրառումներ՝ facebook սոցիալական ցանցում տեղադրված մեր հայրենակիցների կողմից:

...«Այս ի՞նչ է կատարվում: Ամեն օր զինվոր են սպանում մեր բանակում: Այս հարցը հրատապ, օրախնդիր հարց է: Չարագործաբար, չարանենգորեն լափում ու հարստահարում են ու, իբր թե, հոգ են տանում, ինչ-որ բան են անում: Ձեւացնում են եւ կարծում են՝ այս ամենը հանդուրժվելու՞ է ժողովրդի կողմից»:

«Եթե հրամանատարը, հրամանատարիկները չեն կառավարում իրավիճակը, պետք է հեռանան ասպարեզից, կառավարումից: Զբաղված են ինքնահարստացմամբ: Սերժի կառավարությունը կորչի, այդ չարագույժ թշնամին, որ կամաց-կամաց մաշում ու ոչնչացնում է հայոց հարստությունը»:

«Չարժե այսպիսի անվստահելի բանակում հայրենիքի համար ծառայել, քանի որ հայրենիքի պաշտպանը պաշտպանված չէ: Ով տղա ունի՝ պետք է արտագաղթի, առանց այն էլ միլիոնի է հասնում արտագաղթը. թող երկրում մնան միայն օլիգարխները, որոնք վայելում են այսօրվա Հայաստանը: Հարստահարություն, կաշառակերություն, անօրինականություն. ցավալի է տեսնել Հայաստանն այսօր այս վիճակում»:

«Անխիղճ մարդակեր են, չգիտես՝ ինչ ասես: Վրեժ, հատուցում. ոտքի ելեք ժողովուրդ, անկուշտ մարդակերներին զարկեք, դրանք ղեկավար չեն: Ախր ժողովուրդը այնպես պիտի դուրս գա դրանց դեմ, ինչպես ելավ թուրքի դեմ. «Մեկը՝ բոլորի, բոլորը մեկի համար» սկզբունքով: Բա գեներալներն ու ամբողջ կառավարությունը, որ բիզնեսով զբաղվեն, վիճակը միշտ այսպես կլինի»:

«Մեր հասարակությունը քաղցկեղով հիվանդ է, որովհետեւ, նման առօրեական խնդիրները թողած, ինչեր են քննարկում: Մեկը կանգնում ու հայտարարում է. «Մեր երկիրը այս օրին է, որովհետեւ անորակ սերիալներ են ցույց տալիս ու երեխաները որդեգրում են դրանց արժեքները», մյուսը կանգնում, ասում է. «Մեր երկիրը այս օրին է ԱՄՆ-ի վարած քաղաքականության պատճառով», մյուսը. «Այս ամեն ինչի մեղավորը աղանդներն են», հաջորդն էլ, թե. «Այդ եվրոպաներն են մեզ այս օրը գցել: Ա՛յ, քանի նման դատարկ թեմաների հետեւից ենք ընկած,այսպես էլ շարունակվելու է»:

Սկզբնաղբյուրը՝ NEWS.am-ի

Հեղինակ՝ Լիլիթ Թովմասյան

«Մամ ջան, արդեն հանգիստ քնի, ես դիրքերում եմ...»

Ըստ ՊԲ օպերատիվ տվյալների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանային զորամասերից մեկում, նոյեմբերի 19-ի առավոտյան ժամը 08:40-ին, զոհվել է հայ զինվոր: ԼՂՀ Պաշտպանության բանակի մամուլի ծառայությունից հայտնել են, որ ԼՂՀ Պաշտպանության բանակի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում հերթապահություն իրականացնելու ժամանակ հակառակորդի դիպուկահարի կողմից արձակած կրակոցից զոհվել է ժամկետային զինծառայող, 19-ամյա Արեն Արմենի Սիմոնյանը:

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 20-ին, ժամը 08:50-ի սահմաններում, հարավարեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում (Կուրոպատկինոյի ուղղություն) ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ հակառակորդի արձակած գնդակից կրծքավանդակի շրջանում ստացած հրազենային գնդակից մահացու վիրավորվել եւ զոհվել է ՊԲ ժամկետային զինծառայող, 1992թ.-ի ծնված Միհրան Արմենի Մարգարյանը:

Միհրանը 2010թ.-ի դեկտեմբերի 22-ին ԼՂՀ Մարտունի N զորամաս է զորակոչվել Գյումրու զինկոմիսարիատից, սովորել է Եվրոպական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղում: Միհրանի հարազատները սկզբում չուզեցին մեզ հետ զրուցել՝ նշելով, որ իրենք դեպքի մանրամասների մասին ոչինչ չգիտեն, այնուհետ Միհրանի պապիկը համաձայնեց պատասխանել մի քանի հարցերի:

-Մենք գիտենք, որ դեպքը եղել է նոյեմբերի 18-ի լույս 19-ի առավոտը: Լսել ենք նաեւ, որ զոհերի թիվը ոչ թե 2 է, այլ՝ ավելի շատ: Միհրանը դիպուկահար էր, հաստատ այնտեղ ինչ-որ բան է եղել, որ նա դիրքերից դուրս է եկել, երեւի ընկերներին փրկելու համար է արել, ես այդպես եմ կարծում: Նա ամսի 18-ին է դիրքեր բարձրացել ու, ինչքան գիտենք, դրանից հետո էլ տեղի է ունեցել դեպքը,-ասում է Միհրանի պապիկը...

...Դեպքի մանրամասները ճշտելու համար դիմեցինք նաեւ Գյումրու զինկոմիսարիատ, որտեղից մեզ տեղեկացրեցին, որ դեպքի մանրամասներին դեռ տեղյակ չեն. իրենց զորամասից հեռախոսով են տեղեկացրել ու միայն նշել են զինվորի անուն-ազգանունը եւ այն, որ կրծքավանդակի շրջանում մահացու վիրավորվել է:

Նա նաեւ խոստացավ դեպքի մասին մանրամասներ ներկայացնել զորամասի հրամանատարի հետ զրուցելուց հետո:

Սոնա Առաքելյան

«Քար ու ապառաժ պիտի լինենք, որ սրան դիմանանք»

Ասում են գյումրեցի զոհված զինվորի հարազատները

Ստրոմմաշինա թաղամասի 140/008 տնակում, Հարությունյան ամուսինները՝ Սարգիսն ու Աստղիկը, երեկ էլ, իրենց որդու այգողբքի (ինքնահող) օրը, կարկամել էին ու չէին կարողանում հավատալ, որ իրենց որդուն հանձնել են հողին ու նրա կենդանի պատկերն այսուհետ միայն հնարավոր կլինի լուսանկարներում տեսնել: Բայց այդ լուսապարագծում ամփոփված պատկերն արդեն երբեք կենդանի կարոտն առնելուն չի փոխարինի. սա է ծնողներին ու նաեւ հարազատներին մորմոքող ցավը: Արմեն Հարությունյանի մահվան փաստը հավաստող բժշկական վկայականում, որն ստորագրել է բժիշկ Մելքոնյան Հ.Ֆ-ն, նշված է, թե նա ստացել է դեմքի, պարանոցի, կրծքավանդակի, որովայնի, զույգ վերին եւ զույգ ստորին վերջույթների համակցված ականապայթյունային վնասվածքներ, որոնք կյանքի հետ անհամատեղելի են եղել:

Թեեւ դեպքը տեղի էր ունեցել մայիսի 17-ին, սակայն ՀՀ ՊՆ-ն ու ԼՂՀ Պաշտպանության բանակն այդ մասին հաղորդագրություն չեն տարածել: Զինծառայողի մահվան մասին լուրը մայիսի 20-ին տարածել էր Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կայքը:

Panorama.am-ի թղթակիցը ԼՂՀ ՊԲ լրատվության հետ կապերի պատասխանատու Սենոր Հասրաթյանից փորձել է տեղեկանալ, թե ինչու է Պաշտպանության նախարարությունը լռել այդ մասին, վերջինն ասել է, որ իրենց կայքէջում լուրը տեղադրված է եղել: Երբ թղթակիցը նկատել է տվել, որ այն տեղադրվել է միայն շաբաթ օրը՝ մայիսի 19-ին, այն դեպքում, երբ դեպքը տեղի է ունեցել մայիսի 17-ին, Հասրաթյանը պատասխանել է.«Հիմա ամեն անգամ կարելի է նայել մեր սայթը: Էդ մեկն էլ որոշել ենք այդպես լինի: Բանը...ըտեղ ինչ-որ հանցագործություն կա՞: Ամեն օր մտեք, մենք պարբերաբար լուրեր տեղադրում ենք»:

2011 թվականի դեկտեմբերի 29-ին Գյումրու զինկոմիսարիատից զորակոչված Արմեն Սարգսի Հարությունյանը ծառայել է ԼՂՀ Հադրութի շրջանում: Դեպքի օրը՝ 2012 թվականի մայիսի 17-ին, 19-ամյա զինծառայող Արմենը զանգել է մորը, ասել է, թե անպայման ուզում էր խոսել, որովհետեւ երկու օր այդ հնարավորությունը չի ունենալու՝ ուսումնավարժանքների են մեկնում: Ասել էր նաեւ, որ ամեն ինչ լավ է, թող նա չանհանգստանա: Ծնողները պատմում են, թե՝ «Օր չկար, որ Արմենն իրենց չզանգեր: Նույնիսկ, օր է եղել, երբ 2-3 անգամ է զանգել»: Հորեղբայրը՝ Աղվան Հարությունյա-

նը, պատմում է.

-Զինկոմիսարիատից էին եկել մի քանի օր առաջ, ասին, թե պիտի գնամ այնտեղ, Արմենի հետ կապված բան ունեն ինձ հայտնելու: Ինձ պատմեցին, որ երեխան ուսումնական արկերի միջից պատահական ռազմական արկ է վերցրել, որն էլ ձեռքում պայթել է: Զորավարժանքի ժամանակ է եղել, ընդունված է բացատրել, թե ինչն-ինչպես պիտի գործածես: Արկը Արմենի ձեռքում է եղել, ինքն է բացատրել, ու էդ պահին պայթել է:

Նրա շուրջ եւս չորս հոգի են եղել, ովքեր տարբեր մարմնական վնասվածքներ են ստացել: Այս մասին պատմել են Արմենի այն ծառայակից ընկերները, ովքեր զորամասի սպայի հետ եկել էին մասնակցելու նրա թաղման արարողությանը:

Հարազատներից մեկը, չհամբերելով, միջամտեց մեր զրույցին.-էդ երեխեՊ բդի բացատրեր, ընդամենը չորս ամսվա ծառայող է եղել:-Աղվանի որդին, որ ծառայած երիտասարդ է, իր փորձից ելնելով, ենթադրում է.«Ուչենիաների ժամանակ լինում է, որ սպան ինչ-որ գործով բացակայում է, էդ ժամանակ զինվորներից որեւէ մեկն է նրա պարտականությունները կատարում, կարող է՝ հենց էդ պահն է ստացվել ու Արմենի բախտը չի բերել՝ ի՞նչ իմանար, որ ուսումնավարժանքների համար նախատեսված արկղից հանած ականը կարող է մարտական լինել»: Հորեղբորը զինկոմիսարիատում ասել են, որ դեպքից հետո պահեստներում ստուգումներ են կատարվել եւ արդյունքում ի հայտ է եկել եւս չորս մարտական արկ.«Մեզի զինկոմից ասացին: Այսինքն՝ հիմա, որ մեր երեխեն մահացավ ու չորսն էլ հոսպիտալում են, էն մյուս արկերի հաշվարկով կանխվել է տասնյակ զինվորների մահ: Հմի, թե ով է դրել, իրանց ներքին կուխնյան է՝ մեկը-մյուսի գլխին նպատակով կսարքեն, ըդիկ չգիտեմ: Մեղավորին թող գտնեն, պատժեն, որ բոլորին դաս լինի»:

Արմենի առաջին զինակոչի ժամանակ, պատմում է մայրը, որդուն վեց ամսով տարկետում են տվել: «Ինքը քաշ չուներ, բոյն էլ տեղը չէր»,-բացատրում է հորեղբայրը: Բայց վեց ամիս անց՝ «Թե քաշը ավելցել էր, թե բոյն էր տեղը եկել՝ ես չգիտեմ ինչ էր եղել, վերջում էլ պավեստկեն տվին ու տարան բանակ»: Այս զինակոչին բժշկական հանձնաժողովը որոշել էր, որ արդեն զինակոչիկը պատրաստ է ծառայության: Զոհվածի հորաքույրն հռետորական հարց է տալիս. «45 կիլոյանոց երեխուն են տարել, տեսնես ու՞մ տեղն են տարել»:

Մայրը՝ Աստղիկ Հարությունյանը, ասում է, թե որդին ազնիվ, աշխատասեր տղա էր՝ «15 տարեկան էր ու, թեեւ ոչ մի բանի կարիք չունեինք, ու վրան քաշ ու ջանդակ էլ չկար, աշխատում էր էմպես, որ մեծ մարդն այդքան չէր կարող աշխատել»: Անչափ ուրախանում էր մայրը, երբ որդին զանգում ու ասում էր, թե ոչ մի պրոբլեմ չունի զորամասում. «Մա ջան, ըմպես սիրուն սալդաթ եմ դարձել, մտածելու բան չունիս»: Հետո մայրն ավելացնում է.«Ահա՝ չունեցա»:

Հորեղբայրը պատմում է, թե զարմիկին իր կարճահասակության պատճառով ընկերները վերեւից էին նայում, բայց հարգում ու լսում էին նրա խոսքը. «Արմենը փոքրի հետ փոքր էր, մեծի հետ՝ մեծ»: Հորաքույրը պատմում է, թե Արմենը քչակեր տղա էր, մայրը ամենաընտիր կերակուրներն էր պատրաստում որդու համար, բայց նա միեւնույն է, նույն նիհարիկ տղան էր:

Հորեղբայրն իր հերթին վստահ է, որ զարմիկը ոչ մի խնդիր չի ունեցել ծառայության ընթացքում, հավաստիության համար ավելացնում է՝ բացարձակապես չի ունեցել. «Ինչ եղավ՝ ուչենիայի ժամանակ եղավ»: Նրա կասկածները կիսում են մյուս հարազատները: Դեպքի՝ իրենց վարկածներն են հայտնում, թե սպայական անփութության արդյունք է պատահածը կամ, թե ինչ գործ ուներ մարտական արկը ուսումնական արկերի համար նախատեսված արկղում:

Հորաքույրը նկարագրելով Արմենի դին, ասում է. «Ոնց որ կավից սարքած մանեկեն: Մենք, որ մեր երեխուց սարսափինք՝ դե, պատկերացրեք»: Դիահերձարանում հորեղբորն առաջարկել են զոհվածի դեմքը փակել, վերջինը չի համաձայնել: Ի վերջո, մի կերպ գրիմավորել էին դեմքը, որի վրա միայն փակ աչքերն էին երեւում, կզակը ծածկած է եղել: Իսկ հոգեհանգստին, երբ դին դեղերով մշակող մասնագետներ են եկել ու արել իրենց գործը, թոռան համազգեստը շոշափել ուզեցած պապին ասել են, որ չանի այդ բանը՝ այնտեղ միայն նրա ոսկորներն են:

Այս խոսակցությանը հարազատների հետ ներկա էր նաեւ մի պատանի ու մի տեսակ երեխայավարի լսում էր՝ հայացքը փոխանցելով նստարաններին նստած ազգականների դեմքերին: Ես պատից կախված սեւերիզ նկարի նմանությամբ եմ նրան հարցնում, թե ինքը Արմենի եղբա՞յրն է: Նա դրական է պատասխանում: Ուրեմն՝ չէի սխալվել՝ 12-ամյա Արշակն է: Այժմ՝ ծնողների միակ հույսը:

«Քար ու ապառաժ պիտի լինենք, որ սրան դիմանանք»,-հորաքրոջ ձայնն է: Նա նստած է Արմենի նկարով պատի մոտ:

Սամվել Հունանյան

Մինչեւ ե՞րբ պիտի լռենք... Նորից բանակի մասին

«Պետությունը հզոր է իր բանակով», «Հզոր բանակը պետության հիմքն է». այս եւ նմանատիպ կաղապարային արտահայտությունները շատերը շահարկում են՝ կոծկելու ու թաքցնելու բանակում տիրող կեղտն ու աղտեղությունը: Արտաքուստ ամեն ինչ լավ ու հրաշալի թվացող հայկական զորամասերում կատարվում են անհասկանալի ու տարօրինակ, ոչ մի կերպ չբացատրվող ու չմեկնվող երեւույթներ: Վկան՝ օրեցօր ավելացող սպանություններն ու զորակոչվելուց հետո զանազան հոգեկան խեղումներ ստացած երիտասարդների թվի աճը: Նաեւ զանազան վեճերի ու «ռազբորկաների» համար ստիպված նախասահմանված 2 տարին անորոշ ժամանակով երկարելն ու ամեն տեսակ «չաստ նայողների» չգրված, բայց հաստատուն ու անհասկանալի օրենքներով առաջնորդվելը:

Միայն պաշտոնական տվյալներով, 2008-2011թթ ընթացքում 187 ժամկետային զինծառայող է սպանվել, որից միայն 25-ը՝ թշնամու գնդակից, իսկ 1994-ից ցայսօր հայոց բանակում հայրենիքի մոտավորապես 1500 պաշտպան է զոհվել...այն դեպքում, երբ Արցախյան հերոսամարտը 6000 մարդու կյանք է խլել...

Բանակում կատարված վերջին դեպքերը իրարանցում են առաջացրել թե հասարակության շրջանում, թե սոցիալական ցանցերում: Հասարակությանը ցնցեց օգոստոսի 26-ին «Եղնիկներ» զորամասում դաժանաբար սպանված Աղասի Աբրահամյանի մահը, որն, ըստ զորամասի տրամադրած տեղեկությունների, մահացել էր թունավորումից, այնինչ հարազատները դիահերձելիս բռնության բազմաթիվ հետքեր էին գտել տղայի ոտքերին, ձեռքերին ու կրծքավանդակի շրջանում: Նաեւ սեպտեմբերի 7-ին Ասկերանի մարտական հենակետում հերթապահության ժամանակ զոհված Հայկ Մկրտչյանի եւ ավելի քան մեկ ամիս Երեւանի Նորքի հոգեբուժարանում հոգեկան խանգարումով տառապող 20-ամյա Հովհաննես Վարդանյանի հետ կատարված դեպքերը:

Օսմանյան թուրքերի կողմից 1,5 մլն հայերի սպանությունը աղաղակում ու դատապարտում են բոլորը: Ամբողջ աշխարհը, այդ թվում մեր կառավարությունն էր դատապարտում Հրանտ Դինքի սպանությունը, մինչդեռ սեփական երկրի ներսում կատարվող ոճիրներն անտեսվում ու քողարկվում են հենց այդ նույն պետության կողմից...«Ուրիշի աչքի փուշը տեսնում են, սեփական գերանը՝ ոչ» տարբերակը այս դեպքում շատ ձեռնտու է...

Բանակում կատարվող նման սահմռկեցուցիչ դեպքերը հին պատմություն ունեն: Այսօր գյումրեցիներից շատերն են հիշում տարիներ առաջ՝ 1999թ. հոկտեմբերի 11-ին, համաքաղաքացի ժամկետային զինծառայող Կարեն Մալխասյանի սպանության դեպքը՝ Մատաղիսում: Դատաբժշկական փորձաքննությունն այն որակել էր որպես անզգուշությամբ կատարված սպանություն: Ու մինչ սպանվածի հայրը՝ Հենրիկ Մալխասյանը, 4 երկարուձիգ տարիների դատավարության ընթացքում փորձում էր բացահայտել որդու սպանության իրական հանգամանքները, եվրոպական դատարանը մերժել էր գործի քննությունը՝ պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում եվրոպական դատարանի չափանիշներին...

...Սպանության դեպքերի «բացահայտման» մեխանիզմը, Հենրիկ Մալխասյանը, սեփական փորձից ելնելով, շատ հստակ է պատկերացնում.

-Կձերբակալեն մի քանի սպաների, հետո նրանց կատարած հրեշավոր գործողությունների մեղքը կբարդեն ամեն ինչից անտեղյակ զինվորների վրա եւ իրենք կազատվեն: Եթե դատապարտվեն էլ, ապա 2-3 տարի ժամկետով, բայց 4-5 ամիս հետո ազատության մեջ կլինեն...

Սպանությունների դեպքերի բացահայտման օբյեկտիվությանը թերահավատորեն է վերաբերվում նաեւ Վանաձորի Հելսինկյան ասամբլեայի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը: Ըստ նրա՝ հանցագործության իրական մեղավորները չեն պատժվում: Նա չի հիշում մի դեպք, երբ կատարվածի համար պատասխանատվություն կրեն բարձրաստիճան սպայական կազմի ներկայացուցիչները: Ըստ նրա՝ ամեն ինչ ավարտվել է նկատողությամբ, զգուշացմամբ, լավագույն դեպքում՝ պաշտոնազրկմամբ:

-Այսօր մեր երկրում չի աշխատում պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, վերահսկողությունը զինված ուժերի հրամանատարության կողմից թույլ է ու խախտված է զինվորի կյանքի իրավունքը,- մեզ հետ զրույցում նշում է նա:

Ըստ իրավապաշտպանի, այսօր ոչ իրավական մեխանիզմներն ավելի ազդեցիկ են, իրավականներն էլ չեն գործում: Ա.Սաքունցն համոզված է՝ սպանությունների դեմ կարելի է պայքարել միայն այն ժամանակ, երբ կգործի իրավունքների գերիշխանության սկզբունքը, երբ զինվորը չի դիտվի որպես մարդաքանակ լրացնելու միջոց ու արմատախիլ կարվեն կոռուպցիայի բոլոր դրսեւորումները:

-Զինված ուժերը սկսվում են զորակոչից: Փոխանակ ապահովեն պոտենցիալ մարտունակ զինվորներ, հիվանդներին են բանակ տանում: Ուսումնասիրությունը ցույց է տվել՝ պաշտոնատար անձանց զավակները գրեթե չեն ծառայում, ծառայության մեջ եղածների պաշտոնական ցուցակն էլ չեն տրամադրում,-ավելացնում է նա:...

Մինչեւ ե՞րբ հանցագործության իրական մեղավորները պիտի խուսափեն պատժից, մինչեւ ե՞րբ իշխանությունը, ի դեմս զինվորականների ու բարձրաստիճան պաշտոնյաների, պիտի ծիծաղի՝ թե տեսեք-տեսեք, այս անգամ էլ լավ պրծանք: Իսկ ո՞վ է պատասխան տալու խեղված ճակատագրերի ու կորսված կյանքերի համար: Մինչեւ ե՞րբ պիտի լռենք....

Մարինե Պետրոսյան

«Որդիս ինքնասպան չի եղել». որդեկորույս մայրը բողոքում է դատաքննության ընթացքից

Վահեն եւ Թորգոմը

2011թ., փետրվարի 12՝ ԼՂՀ Խոջալուի զորամասերից մեկում հնչեց կրակոց, որը խլեց ժամկետային զինծառայող, 22-ամյա գյումրեցի Թորգոմ Սարուխանյանի կյանքը: Հրազենային վնասվածքից մահացած զինվորի մահվան պատճառները բացահայտող դատական գործընթացը մինչ օրս էլ դեռ շարունակվում է, մինչդեռ Թորգոմի մայրը՝ Լենա Սարուխանյանը նշում է, որ հետաքննությունը չի ընթանում ճիշտ ուղիով՝ քննության ողջ ընթացքում դիտարկվել է միայն ինքնասպանության վարկածը, այն դեպքում, երբ առկա են բազմաթիվ անպատասխան հարցեր:

-Թորգոմը նման բան չի արել: Ոչ ոք չի կարող ասել եւ իրավունք չունի ասելու, որ նա այդ քայլին դիմել է: Քննիչը հետաքննությունը տանում է միայն մեկ ուղղությամբ, որ իբր թե վիճաբանություններն են տղայիս դրդել ինքնասպանության: Տղաս երբեք չի բողոքել, չի նշել զինվորների հետ ինչ-որ վիճաբանության կամ կոնֆլիկտի մասին: Նա հավասարակշռված եւ լուրջ բնավորություն ուներ, փոքր չէր՝ 22 տարեկան: Նա այդ քայլին չէր գնա…

…Տիկին Լենան նշում է, որ Թորգոմի քունքոսկրի վրա հարված է եղել, որից քունքը այտուցվել է.

-Դիահերձումից պարզ չի դարձել՝ հարվածը կապ ունեցե՞լ է մահվան հետ, թե՞ ոչ, որովհետեւ քունքոսկրի մասին որեւէ բան չկա: Ես նույնիսկ չգիտեմ՝ կրակոցը դիմացի՞ց է եղել, թե՞ թիկունքից: Իսկ քունքին հարվածի մասին ես քննիչին էլ եմ ասել, բայց նա այդ ուղղությամբ չի աշխատում:

-Նամակը չի գրվել նրա ձեռքով, տղայիս ձեռագիրը կեղծել են: Թորգոմը բառերը միայն հայերեն տառերով չէր գրում: Նա գրում էր հայերեն, անգլերեն, ռուսերեն խառը տառերով: Բացի այդ, անգլերեն տառերը մեծատառերով էր օգտագործում բառերի մեջ…

…Տիկին Լենան պատմում է, որ Թորգոմի մոտ եղել են մատանի եւ ժամացույց, թանկարժեք չեն եղել, սակայն դեպքից հետո անհետացել են: Նա դրա համար միայն մի բացատրություն ունի.

-Եթե ժամացույցը մարդու ձեռքին է կապված, եւ նա մահանում է՝ ժամը կանգնում է: Ժամացույցը վերացրել են, որ պարզ չլինի, թե չար գործը երբ են արել:…

Տիկին Լենան քննիչ Մարտիրոս Ավագյանից պահանջել է հետաքննությունը տանել նաեւ այս ուղղություններով, սրանք վարկածներ են, որոնք կարող են բացահայտել ճշմարտությունը: Երբ նա ցանկացել է բողոք գրել՝ քննիչն ասել է. «Ի՞նչ ես թուղթը սեւացնում, հարցեր կան՝ ասա, ես բանավոր կպատասխանեմ»…

Ալիսա Հակոբյան

Կրկին զինվոր է մահացել

Դեկտեմբերի 3-ին Վանաձորի «Դուց» զորամասում հրազենային վնասվածքից մահացել է ժամկետային զինծառայող, այս տարվա հունիս ամսին Գյումրու զինկոմիսարիատից բանակ զորակոչված Նարեկ Դավթյանը: Զինվորի մահը լայնորեն քննարկվում էր «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում: Քննարկում էին դեպքի պատճառները, քննադատում, փորձում ելք գտնել…

-Հայաստանի բանակում գրանցվել է հերթական մահը… եւ կրկին սրա համար ոչ մեկը պատասխան չի տա:

-Եւ այսպես կշարունակվի մինչեւ 5000 դրամանոց մայիսյան ընտրությունները: Ելքը հանցավոր վարչախմբի հրաժարականն է:

-Չեմ հավատում, որ ինքնասպանություն է…

-Չեմ հասկանում՝ ի՞նչ եք ուզում, ինչո՞ւ իրար չեք հասկանում…մենք էլ ենք մեղք…

-Ինչ-որ պրովակացիաների շրջան է, իսկ արդյունքում տուժում են անմեղ տղաները…

-Այն պատճառով, որ ոմանց համար բանակը դարձել է բիզնես:

-Տականքներ…

-Էլի՛..սպայական անձնակազմին եւ հրամանատարական անձնակազմին պետք է խստորեն պատժել: Հերիք է, ինչքա՞ն կարելի է…Սա՞ է մարտունակ բանակը:

-Ինքնասպանվենք պրծնենք, էլի….

-Հիմա մնացել էր ինքնասպանության վարկածները «քաղաքացիական նախաձեռնությունները» տարածեն:

-Դեպքի մանրամասները ո՞նց իմանանք…

-Նկատենք, որ պաշտոնական կողմն այս անգամ չի ասել ինքնասպանություն, փաստորեն այս վարկածը տարածում է «Չենք լռելուն»… ու դրանք հայտնվում են մամուլի էջերում՝ որպես վերնագրեր:

-«Ինքնասպանության» հետ պետք է զգույշ լինել, միայն այն, որ «Չենք լռելուն» առանց մտահոգության օգտագործում է այդ բառը՝ դա արդեն մտածելու տեղիք է տալիս:

-Անկեղծ ասած, Ձեր մտահոգությունը կիսում եմ…

-Առաջարկում եմ «Բանակն իրականում» խմբին հանդիպում կազմակերպել «Չենք լռելուի» հետ:

-Դա միֆոլոգիական հանդիպում ա լինելու…Էս ընդամենը մեդիա պրոյեկտ ա…իրենք վստահելի աղբյուրներ ունեն երկրի բոլոր զորամասերում…

-Իրենց երեխեքը չեն սպանվողներ-ինքնասպանվողները…

-Մանր-մունր նախաձեռնություններով բանակում տիրող կործանարար վարք ու բարքին վերջ տալ հնարավոր չէ: Հզոր շարժում է պետք, որովհետեւ արատները մանր-մունր բաներ չեն, այլ ժամանակի փորձություն անցած, արմատացած հզոր համակարգեր են, տասնյակ միլիոնների հասնող ֆինանսական մութ գործարքներով ցեմենտված ու արմատացած:

Ալիսա Հակոբյան

Հայոց բանակը մտահոգությունների առանցքում

2011-ի սեպտեմբերի 6-ին հայաստանյան իրավապաշտպան մի քանի կազմակերպություններ հանդես եկան հայտարարությամբ, որտեղ, մասնավորապես, նշվում էր, որ 1994թ.-ից ի վեր հայկական բանակում զոհվել է ավելի քան 1500 երիտասարդ: Եւ սա՝ խաղաղ պայմաններում:

Հայտարարության մեջ ՀՀ գլխավոր գերագույն հրամանատար Սերժ Սարգսյանից պահանջվում էր մեկ ամսում գործուն քայլեր ձեռնարկել՝ կատարված բռնության, խոշտանգումների, սպանությունների եւ ինքնասպանությունների դեպքերի մանրակրկիտ ուսումնասիրության, մեղավորներին պատժելու, բանակում տիրող բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտի վերացման եւ խաղաղ պայմաններում մահացած զինծառայողների ընտանիքներին պատճառված բարոյական եւ նյութական վնասի դիմաց փոխհատուցման ուղղություններով: Հակառակ դեպքում՝ «բանակում տիրող իրավիճակի համար մեղավոր եւ հովանավոր ենք համարում ՀՀ գլխավոր գերագույն հրամանատար Սերժ Սարգսյանին եւ պահանջում նրա հրաժարականը»,- նշվում էր հայտարարության մեջ:

Սեպտեմբերից անցել է 4 ամիս: Հայտարարությունը ստորագրած կազմակերպությունների պահանջին հակառակ, բանակում շարունակում է տիրել ամենաթողության մթնոլորտը, գրեթե ամեն օր հերթական երիտասարդի մահը փաստող գույժ ենք լսում: Պաշտոնական վարկածներով՝ ինքասպանված, իրականում հերթական բռնության (ու կարեւոր չէ բռնության տեսակն ու իրագործման մեթոդը) պատճառով մահվան դեպքերի մասին լուրերը հասարակության լայն շրջանակներում քննարկումների առարկա են դարձել: Մարդիկ ամեն օր, տարբեր վարկածներով, մեկնաբանություններով, դատողություններով ու հիմնավորումներով պատմություններ են լսում, որոնք բոլորն էլ նույն՝ ամենաթողության մթնոլորտի հետեւանք են: Արդյունքում՝ որդեկորույս մայրեր, անհայր մնացած ընտանիքներ, հուսալքված հասարակություն եւ բանակից բոլոր հնարավոր միջոցներով խույս տվող երիտասարդություն:...

...Երբեմն բանակի մասին քննադատական մոտեցումները մամուլում, հակառակ դիրքորոշումն ունեցողների կողմից դիտարկվում են որպես թշնամու ջրաղացին ջուր լցնել: Իսկ արդյո՞ք ազգային բանակում հասարակ զինվորի նկատմամբ կա ոչ թշնամական վերաբերմունք: Կհասնե՞նք մի օր այն բանին, որ սպաները զինվորին որդու նման պահեն:...

...Հասարակական գործիչներն այս ամենին ունեն իրարից էականորեն չտարբերվող բացատրություններ: «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյանը բանակն համարում է ազգային հպարտություն, տիրող իրավիճակը բացատրում է այսպես.

-Որովհետեւ երկրի իշխանությունը բռնազավթվեց մի խումբ մարդկանց կողմից, որովհետեւ ինչպես բոլոր ոլորտներում, բանակում էլ կան արտոնյալներ, որ մտածում են՝ ամենակարող են: Որովհետեւ երկրի իշխանությունների համար մարդը, իսկ բանակում հրամանատարների համար զինվորը գլխավոր արժեք չէ: Այսպես կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ մարդը չի եկել առաջին պլան:

Թե ե՞րբ կգա մարդը ՀՀ-ում առաջին պլան, դժվար է ասել: Ու քանի դեռ այդպես չէ, հայոց բանակում տիրող իրավիճակի մասին որքան գրվել ու խոսվել է, նույնքան էլ կգրվի ու կխոսվի: Իսկ առայժմ հայոց բանակի մեր հայորդիների կյանքի համար մնում է միայն հուսալ Աստծո բարեհաճությունն ու օրհնությունը:

Լիլիթ Թովմասյան

Ինչպիսի՞ բանակ ենք ուզում

Բանակն ազգային արժեք է, արժեք, որ ստեղծվեց մեր երկրի ու ժողովրդի համար ծանրագույն պայմաններում, մեծ զոհողությունների գնով ու մարտի դաշտում: Այն ծնունդ առավ հախուռն՝ անհրաժեշտությունից ու նոր հաղթանակներ կերտելու ձգտումով: Ձեւավորվելով 1988թ. կամավորական ջոկատներից ու անցնելով կայացման ու զարգացման 3 փուլ (1988-ի փետրվարից մինչեւ 1992-ի մայիս, 1992-ի հունվարից 1994-ի մայիս, 1994-ի հունվարից մինչ օրս)՝ այսօր հայկական զինված ուժերը դժվար է բնորոշել որպես կայացած ու կուռ կառույց: Ինչքան էլ փորձենք երեւույթի մեջ լավը տեսնել ու ազգայինը արժեւորելու գիտակցումով փառաբանել այն, իրականությունն այլ բան է ձայնում: Մեծ դժվարությամբ ու շատերի արյամբ ստեղծված ազգային բանակն այսօր ամենօրյա քննարկումների ու տարբեր խոսակցությունների առանցքում է, խոսակցություններ, որոնք շատ են հեռու գովաբանական ու փառաբանական լինելուց...

...Իսկ որտե՞ղ սխալվեցինք, որ հայրենիքը պաշտպանելու փոխարեն, հայ երիտասարդն այսօր խուսափում է բանակից, երբ ապագա զինվորը տարբեր արդարացված ու չարդարացված միջոցներ է փնտրում չծառայելու համար: Գուցե այդ «ծառայել» բա՞ռն է խեղճության զգացողություն հարուցում իրեն երբեք խեղճ չհամարող հայ երիտասարդի մեջ, կամ գուցե պատճառներն իրականում ա՞յլ տեղ են թաքնված:

-Բանակից խուսափելու պատճառ կարող է լինել բանակում տիրող իրավիճակի վերաբերյալ մտահոգությունը, որ պաշտպանված չեն: Բացի այդ, հնարավոր է, մարդը այլ նպատակներ ունի ու չի կարծում, թե բանակում ծառայությունը իրեն ինչ-որ բան կտա, կամ կարեւոր ու անհրաժեշտ է իր համար,- ասում է Վանաձորի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի նախագահ Արթուր Սաքունցը:...

...Մեր խնդիրներն ու խոցելի կողմերը մենք լավ գիտենք: Ուստի, բանակի տոնը ցնծությամբ ու մեծ շուքով նշելուց առաջ, հարկ է մի պահ մտածել, որ այդ նույն բանակը, որ երկրի խաղաղ գոյակցություն ապահովելու համար 6000-ից ավել զոհ ու 7500-ից ավել վիրավոր է տվել, այսօր օգնության կարիք ունի: Ձախողումների ու թերությունների մասին միայն ու վերստին աղաղակելը խնդրի լուծում չէ: Անհրաժեշտ է առողջ քննադատություն, հստակ քայլեր ու հատուկ ռազմավարություն...

Տոնդ շնորհավոր, հա՛յոց բանակ:

Մարինե Պետրոսյան

Լուսանկարը՝ www.hetq.am կայքի

«Թող թոշակներից էլ կտրեն, միայն թե անվտանգ ծառայեն մեր երեխաները»

Գյումրիում գարնանային զորակոչը սկսվելուց ընդամենը 2 օր առաջ էր, որ Ստրոմմաշինա թաղամասում ծնողները հողին հանձնեցին բանակում ծառայած իրենց զինվոր որդուն՝ Արմեն Հարությունյանին: ԼՂՀ Հադրութի շրջանում ծառայած զինվորը մարտական նռնակի պայթյունի հետեւանքով է զոհվել, մեղավորը, ըստ գյումրեցիների, զորամասի ղեկավարությունն է, քանի որ ուսումնավարժանքների ժամանակ անթույլատրելի էր մարտական ականի առկայությունը: Մայիսի 22-ը Գյումրիում գարնանային զորակոչի առաջին օրն էր եւ, դատելով զինկոմիսարիատի բակում հավաքված ծնողների դեմքերից, մեծ ոգեւորությամբ չէ, որ իրենց զավակներին բանակ էին ճանապարհում, մանավանդ 2 օր առաջ տեղի ունեցածն իրենց աչքի առջեւ ունենալով:

Հատկապես տարեցները, մեզ հետ զրուցելով ասում էին. «Էս ինչ խուժանություն է տիրում մեր բանակում: ԽՍՀՄ տարիներին, թեկուզ Ռուսաստանի ամենահեռավոր վայրերում ծառայում էինք, նման դժբախտ դեպքեր, սպանություններ ու ինքնասպանություններ չկային, դե հիմա արի ու զավակիդ ուղարկիր բանակ»:

...Վկայակոչելով վերջերս զոհված գյումրեցի զինծառայողին, զինկոմիսարիատի բակում հավաքված նորակոչիկների ազգականներն ասում են. «Եթե երեխաներին տանում են, էլի անփորձանք թող ետ վերադարձնեն մեզ: Թող մեր թոշակներից էլ կտրեն, բայց մեր երեխաները լավ լինեն»: Նրանք նաեւ ասում են, որ ծառայող զիվորներին հարազատները միշտ հագուստ են ուղարկում, իրենք եւս դա անելու են, քանի որ զորամասերում զինվորների խնամքին պատշաճ ուշադրություն չեն դարձնում:

Մեզ հետ զրույցում տիկին Ալիսան ասում է, որ իր թոռանը՝ Նարեկ Հովհաննիսյանին են բանակ ճանապարհելու, բայց նրա ոտքերը թարախակալված են, ոսկրերի փտախտ է առաջանում, եղունգների գերաճի պատճառով թարախային պրոցես է զարգացել, առանց կոշիկների է միշտ քայ-

լել, բայց բժշկական հանձնաժողովը որոշել է, որ պետք է բանակ ուղարկեն:

-Բոլորս էլ մայր ենք, ուզում ենք, որ մեր երեխաները նորմալ վիճակում ետ վերադառնան: Երեք անգամ վիրահատել ենք տղայիս ոտքը, բայց չգիտեմ՝ ինչ պետք է լինի,-ասում է Ն.Հովհաննիսյանի մայրը:

Լրագրողների հետ զրույցում Գյումրու զինկոմիսարիատի զորակոչային բաժնի պետ Արամ Գրիգորյանն ասաց, որ զինվորական գաղտնիք է, թե քանի հոգի է զորակոչվելու բանակ, ուստի ինքը թիվ չի հրապարակի, հավելելով, որ այն երեխաները, ովքեր բուժզննության եւ հետազոտության արդյունքում պիտանի են ճանաչվել, մեկնելու են զինծառայության:...

...Զինկոմիսարիատի բակում թոռանը ճանապարհող Հեքնոյան Վոլոդյայի խոսքերով, երեխաների կյանքը դրված է վտանգի տակ, բանակը անտերության է մատնված: Խաղաղ ժամանակ օրական մի զինվոր է զոհվում. «4 երեխաներիս ռուսական բանակ եմ ուղարկել, փառքով, պատվով ետ են եկել»:

Զրուցակիցներիցս մեկն էլ ասում է, որ եթե ապահով տեղ լինի, ծնողները լացով չեն ճանապարհի, իսկ օլիգարխների երեխաները չեն ծառայում՝ ի տարբերություն հասարակ մարդկանց:

Անահիտ Սիմոնյան

Զինվորի դիակը հասավ Գյումրի, իսկ «Կամբատին» փախցրին

Հունիսի 1-ին, ժամը 8:20-ի սահմաններում, ԼՂՀ Պաշտպանական բանակի Հադրութի զորամասերից մեկում, մարտական դիրքում հրազենային մահացու վիրավորում ստանալով, զոհվել է 1993 թվականին Գյումրում ծնված ժամկետային զինծառայող Սարո Արտյոմի Սամվելյանը: Նրա մահվան փաստով հարուցվել է քրեական գործ՝ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի առաջին մասի հատկանիշներով (ինքնասպանության հասցնելը): Այս մասին News.am ի թղթակցին հայտնել է ՊՆ քննչական ծառայությունը:...

...Հունիսի 2-ին, ժամը 12:30-ի սահմաններում, Գյումրու զինկոմիսարիատի հերթապահ մասի սպայից փորձեցի տեղեկանալ դեպքի մանրամասներին: Մայորն ասաց, թե իրենց էլ գրեթե ոչինչ հայտնի չէ միջադեպի մասին: Ավելին, Երեւանից են անգամ զանգում ու փորձում որոշակի տեղեկություններ ստանալ, մինչդեռ, ըստ մայորի, իրենք առայժմ այդ մասին պաշտոնական գրություն չեն ստացել ու հստակ որեւէ բան ասել չեն կարող: Հայտնի է միայն, որ հրաձգություն է տեղի ունեցել, սակայն, դա թշնամու կողմի՞ց է արձակված եղել, թե՞ ներքին հրաձգություն է եղել, սպան վստահաբար ասել չկարողացավ:...

...2011 թվականի դեկտեմբերի 21-ին զորակոչված եւ 19 տարին չբոլորած զինվորի մահվան փաստը հավաստող վկայականում գրված էր, թե մահվան բնույթն անորոշ է ու, որ նա ստացել է գլխուղեղի կարեւորագույն ֆունկցիաների խանգարում, գլխի հրազենային, գնդակային միջանցիկ վիրավորում՝ գանգի ոսկրերի բազմաբեկոր կոտրվածքներ եւ ուղեղանյութի ջնջխում, մարմնի տարբեր շրջաններում՝ քերծվածքներ ու արյան զեղումներ: Վկայականը ստորագրել է դատաբժշկական փորձագետ Բաբայան Ա.Ք.-ն:

Դիակն ուղեկցող փոխգնդապետ, գումարտակի հրամանատար Կարեն Իշխանյանին, ով Հադրութի զորամասից ուղեկցել էր դիակը Գյումրի, ու ում Սարոյի հարազատները «Կամբատ»-ով էին դիմում, հարց ուղղեցին, թե ինչու՞ են հաճախացել սպանությունների դեպքերը բանակում, միայն վերջին օրերին Գյումրի սպանված զինվորներ է, որ բերում են ու բերում. «Ախր, թուրքի գյուլլից չեն մահացել, յուրայինների ձեռքով են զոհվել ու՝

ոչ պատերազմական պայմաններում»:

Դարձյալ հռետորական հարցի պես հնչեց, թե սպայական կազմը ինչու՞ չի կարողանում կարգ ու կանոն հաստատել ժամկետային զինծառայողների միջեւ ու, թե՝ եթե ի վիճակի չեն այդ մարդիկ դա անել, ինչու՞ չեն հեռացվում համակարգից, իրենց գբաղեցրած գործերից, թող ուրիշներին զիջեն իրենց պաշտոնները՝ այնպիսի մարդկանց, ովքեր բանակային գործին իրապես տիրապետում են:

Թե չէ, ըստ Սարոյի հարազատների, ինչպե՞ս պատահեց, որ մարտական դիրքեր գնացին մի քանի հոգով, իսկ հետո այնտեղ ծեծեցին անմեղ, «անվնաս էրեխին» ու հետո էլ Նոյեմբերյանից զորակոչված սերժանտը հրազենից վերջնականապես սպանեց նրան: Զոհվածի հորաքույրն հարց տվեց, թե ինչու՞ էին Սարոյին «գելերի» հետ ուղարկում դիրքեր, հավանաբար, նկատի ուներ Սարոյի հետ դիրքերում գտնված հինգ հին ծառայողներին. «Մի՞ թե դժվար էր դա կանխելը»: Հորաքույրը նաեւ չարացած էր «Կամբատի» հանդեպ այն պատճառով, որ վերջինս Երեւանում իբր թե պաշտոնապես ասել էր, թե Սարոն ինքնասպանություն է գործել:

«Կամբատը» լուռ լսում էր բոլորին ու ոչ մի կերպ իր անհամաձայնությունը չէր հայտնում: Միայն ամրակազմ մի երիտասարդ, որ կանգնած էր Կարեն Իշխանյանի կողքին, նրա փոխարեն հոխորտաց. «Բանակ է, ամեն ինչ էլ կլինի, կճանապարհեք, կգնան ու բարով-խերով կգան»:

Այդ պահին, ի պատասխան նրա հոխորտանքի, հարազատներից կամ հարեւաններից մեկն ասաց, թե նրա «բարով-խերով» ասածը այս դեպքին է՞լ է վերաբերում: Հետո փոխգնդապետին ասացին, թե թաղում շուտով երկու զինակոչիկի էլ են ճանապարհելու բանակ, հիմա ի՞նչ խորհուրդ կտա, ի՞նչ սրտով ճանապարհեն: «Կամբատն» այս դեպքում էլ խորհուրդ չուներ նրանց տալու:

Ոոպեներ անց, զոհված զինվորի երիտասարդ ազգականներից մեկը, ով նույնպես այդ թաղից էր, նետվեց փոխգնդապետի ուղղությամբ ու բացականչեց. «Ժողովուրդ, խփե՛ք սրան, սա է Սարոյիս սպանողը»: Բնակիչներից ոմանք, հատկապես երիտասարդները, վազեցին նրա ուղղությամբ, իսկ փոխգնդապետի ամրակազմ ուղեկիցը, բավականաչափ հանդուգն պահվածքով, այդ աղերսագին ճիչն արձակած երիտասարդի պարանոցից դիմահար բռնած, պահում էր ու մարդկանց կողմը բղավում, թե կանգնեն իրենց տեղերում: Այստեղ էին նաեւ ռազմական ոստիկանության սպաներ, ու քիչ անց, այս ամբողջ խառնաշփոթի ու աղմուկ-աղաղակի մեջ, փոխգնդապետն անհետացավ, փախցրին-տարան:

Մնացին հարազատները, ընկերներն ու թաղի ժողովուրդը՝ Սարոյի դիակի հետ: Հարազատների պատմելով, դիակի վրայից ծածկոցը բացելուց հետո տեսել էին, որ սպանված զինվորը ոտաբաց է՝ առանց կոշիկների: Սարոյի դեմքին, բերանով եւ պարանոցով մեկ վիրակապ էր դրած, դեմքն ամբողջությամբ սեւակապտավուն էր:

Սամվել Հունանյան

Բանակային մահացությունները նվազեցնելու եւ բանակային բարեփոխումների համար

առաջարկությունների փաթեթ

Բանակային մահացությունները նվազեցնելու եւ բանակային բարեփոխումների համար առաջարկությունների փաթեթ

Փաթեթը մշակվել է ոլորտի խնդիրներով զբաղվող մեկ տասնյակից ավելի փորձագետների, իրավաբանների եւ լրագրողների հետ խորհրդակցությունների արդյունքում: Խորհրդակցություններին մասնակցել են Արթուր Սաքունցը (Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ), Ժաննա Ալեքսանյանը (լրագրող, Հանուն մարդու իրավունքների ՀԿ), Արմինե Սադիկյան, Արայիկ Զալյան (ՀՔԱՎԳ), Ծովինար Նազարյան (լրագրող, «Բանակն իրականում» խումբ), Սոնա Այվազյան (Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն), Լալա Ասլիկյան (փաստաբան), Զարուհի Հովհաննիսյան («Բանակն իրականում» խումբ), Արտաշես Սերգոյան («Խաղաղության երկխոսություն» ՀԿ), Էդգար Խաչատրյան («Խաղաղության երկխոսություն» ՀԿ) եւ ուրիշներ:

https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=22&cad=rja&ved=0CCsQFjABOBQ&url=http%3A%2F%2Fwww.ecolur.org%2Fhy%2Fnews%2Felectionspoliticsecology%2Ftransparency-internationalv-anticorruption-center-summarizing-results-of-elections-to-yerevan-aldermenvs-council%2F4911%2F&ei=yjiGUo7JCsLtswapuoCgCw&usg=AFQjCNEAP41cvvG5Kz2IFqooKHaJ3OULGQ&bvm=bv.56643336,d.Yms

1. Հատուկ եւ լրացուցիչ ջանքեր ներդնել սպայական անձնակազմի կրթության եւ մասնագիտացման համար:

2. Հանրակրթական համակարգում հատուկ դասաժամեր հատկացնել ապագա զինծառայողների իրազեկմանը, ուսուցմանը, իրավունքների ճանաչմանը ու պաշտպանության համակարգի ծանոթացմանը:

3. Ծրագրել 5 տարվա ժամանակահատվածում պրոֆեսիոնալ բանակի համակարգի ներդրումը՝ Հայաստանում:

4. Աղջիկներին զորակոչել բանակ՝ 6-12 ամսյա ժամկետով:

5. ՀՀ քաղաքացիներին չզորակոչել զինծառայության ԼՂՀ, քանի որ այս դեպքում՝ օրենքի եւ օրինականության տեսակետից, բազմաթիվ խոչընդոտներ են առաջանում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այս զինծառայողները, մեկնելով ԼՂՀ, ծառայում են ոչ թե ՀՀ բանակում, այլ ԼՂՀ ՊԲ զորամասերում, այսինքն՝ այլ պետության բանակում, կամ անգամ ԼՂՀ տարածքում ծառայելիս, ՀՀ քաղաքացին օրենքով համարվի ՀՀ բանակի զինծառայող:

6. Զորակոչված զինծառայողներին տեղաբաշխել ըստ զորամասերի՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, ավելացնելով վիճակահանության սկզբունքը:

7. Ներդնել պետության կողմից զինվորականներին կյանքի եւ առողջության ապահովագրման համակարգ:

8. Զորամասերում ունենալ հոգեբաններ, ինչը կնպաստի հատկապես

ինքնասպանությունների նվազեցմանը: Գուցե արժե, որ նրանք փոխարինեն հոգեւորականներին: Զորամասերում ՀԱԵ հոգեւորականների առկայությամբ որոշակիորեն սահմանափակվում է այլ կրոնական համոզմունքներ ունեցող զինծառայողների խղճի եւ դավանանքի ազատության իրավունքը:

9. Բոլոր զորամասերում բացել ժամկետային զինծառայողների կարիքները բավարարող ապրանքների եւ պարենամթերքի խանութներ, ինչը կիջեցնի դասալքության մակարդակը: Հարկ է, որ զորամասերի խանութներում արգելվի ալկոհոլային խմիչքների վաճառքը, ինչպես նաեւ՝ խիստ վերահսկվի, խանութները փակ լինեն զինվորականների քնի ժամին, ինչը կօգնի խուսափել անկարգություններից:

10. ՀՀ բանակում բարձրացնել իրավագիտակցությունը, որպեսզի որեւէ զինվորի իրավունքների պաշտպանությունը մյուս զինվորների կողմից բացասական չդիտվի: ՀՀ բանակում ժամկետային զինծառայողը իրավական առումով անպաշտպան է, որոշ դեպքերում՝ գրեթե ստրկական վիճակում: Բազմաթիվ են ահազանգերն այն մասին, որ զինվորները ծեծվում են, նվաստացվում հրամանատարների կողմից: Բողոքի դեպքում զինվորը հայտնվում է ավելի վատ վիճակում:

11. Ներդնել ծնողի եւ զորակոչված զինվորի միջեւ ավելի ակտիվ կապի համակարգ, ինչի արդյունքում կնվազեն կապի հայթայթման կոռուպցիոն դրսեւորումները:

12. Մահացության դեպքերում ընտանիքին փոխհատուցման նպաստը բարձրացնել՝ հասցնելով ամսական հանրապետությունում այդ պահին գործող, օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափի հնգապատիկին, իսկ ամսական թոշակը բարձրացնել, հասցնելով հանրապետությունում այդ պահին գործող նվազագույն աշխատավարձի քառապատիկին:

13. Փոխհատուցել, տրամադրել թոշակ եւ նպաստ ոչ միայն սպանությունների, այլ նաեւ ինքնասպանությունների դեպքերում, (կասկածներ կան, որ հաճախ սպանության դեպքը դիտավորյալ որակավորվում է որպես ինքնասպանություն եւ որպես հետեւանք չի տրամադրվում փոխհատուցում, թոշակ եւ նպաստ, ինչպես նաեւ քրեական գործ չի հարուցվում):

14. Զորացրվելիս անցկացնել զորացրված զինվորների բուժզննում: Զինծառայության ընթացքում ի հայտ եկած հիվանդությունների բուժումը դնել պետության վրա, որպես պոզիտիվ պարտավորություն եւ բուժումն իրականացնել պետական պատվերի շրջանակներում:

15. Բանակը ապաքաղաքականացնել, բացառել բանակի զորաշարժերը քաղաքական եւ/կամ ներքաղաքական նպատակներով, բացառել բանակի օգտագործումը քաղաքական ուժերի, հասարակական կամ քաղաքացիական շարժումների եւ գործունեության դեմ:

16. Բանակում ՀՀ նախագահի եւ ԱԺ ընտրությունների քարոզարշավների ժամանակ ապահովել հավասար պայմաններ բոլոր թեկնածուների համար: Ունենալ քարոզչական վահանակ՝ բոլոր թեկնածուների քարոզչական նյութերով, զորամասերում ապահովել հանրային հեռուստատեսությամբ եւ հանրային ռադիոյով անվճար քարոզչական եթերաժամանակի ամբողջական դիտում եւ ունկնդրում: Արգելել բանակում միակողմանի եւ/կամ անհավասար քարոզարշավի իրականացումը: Այս ամենի վերահսկողության համար ապահովել քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի վերահսկողական հնարավորություն: Քվեարկության օրը, զինծառայողներին ոչ թե փոխադրել ընտրատեղամաս, այլ ազատ տալ երեք ժամով: Տեղամասերից երեք եւ ավելի կմ հեռավորությամբ տեղակայված զորամասերի զինծառայողներին չորս հերթով տեղափոխել տեղամասի տեղադրության համայնք, տեղամասից առնվազն մեկ կմ հեռավորության վրա եւ ազատ տալ երեք ժամով, այսպիսով բացառել ընտրություններին վերջիններիս մասնակցության վերահսկողությունը: Կամ՝ ժամկետային զինծառայողներին օրենքով արգելել՝ մասնակցել ընտրություններին:

17. Հարկավոր է ներդնել ԱԺ-ի կողմից խորհրդարանական վերահսկողության իրականացման համակարգ՝ բանակի ու բանակային հանցագործությունների դեպքերի նկատմամբ: Խորհրդարանական վերսհսկողական մարմնի/հանձնաժողովի կազմում ընդգրկել հավասար թվով պատգամավորների՝ խորհրդարանական մեծամասնությունից եւ ընդդիմությունից, ներգրավելով այնտեղ բոլոր ընդդիմադիր կուսակցություններից առնվազն մեկական պատգամավորի:

18. Բանակի բժշկական եւ բուժական ծառայությունը դարձնել մասնակի քաղաքացիական: Հարկ է, որ զինակոչման ժամանակ զինակոչիկի առողջության վիճակի մասին բժշկական եզրակացություն տան քաղաքացիական բժիշկները, դա չպետք է արվի զինվորական օղակներում, որովհետեւ այդ դեպքում ավելի մեծ է կոռուպցիայի հավանականությունը: Ակնհայտ շահերի բախում կա, երբ զինվորական բժիշկն է տալիս առողջության գնահատականը, որը, զինակոչիկների բավարար թվակազմն ապահովելու համար, ավելի է հակված անտեսել զինակոչիկների առողջական խնդիրները, քան քաղաքացիական բժիշկները:

19. Զինվորական գործերով դատաբժշկական կենտրոնները դարձնել անկախ:

20. Զորամասերում ստեղծել ծնողների եւ քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի համար մատչելի տարածքներ կամ տիրույթներ, որտեղ վերոհիշյալ խմբերի ներկայացուցիչները կկարողանան այցելել պարզեցված թույլտվությամբ: Հնարավորություն ստեղծել քաղաքացիական հասարակության խմբերին պատահական ընտրանքով այցելել զորամասեր եւ ուսումնասիրել, ծանոթանալ տիրող իրավիճակին:

21. Հնարավորություն ընձեռել ձեւավորելու բանակում դիտարկումների անկախ դիտորդական խումբ, որը կկարգավորվի օրենքով սահմանված

կարգով եւ չի լինի պաշտպանության նախարարությանը կից:

22. Մանրամասնությամբ հրապարակային դարձնել ՊՆ հիմնադրամ(ներ)ի եկամուտները եւ ծախսերը:

23. Վերահսկողության խիստ եւ նոր համակարգ ներդնել մարտական դիրքերում ծառայություն կրող զինծառայողների, զենք-զինամթերքի հանձնման-ընդունման գործընթացում: Խստացնել զինծառայողների կողմից ստացված փամփուշտների քանակի վերահսկողությունը հերթափոխը ընդունելու եւ հանձնելու ժամանակ:

24. Գաղտնազերծել ՊՆ սպասարկման համար արվող բոլոր այն գնումները, որոնք չեն վերաբերվում զինտեխնիկային, զենքին, զինամթերքին, պաշտպանական ամրություններին, հաղորդակցության մեխանիզմներին: Հրապարակային դարձնել սննդի, համազգեստի, վառելիքի, գրենական պիտույքների, հիգիենիկ պարագաների գնումների մասին տեղեկությունները:

25. Ունենալ ռազմական գործերով Մարդու իրավունքների պաշտպան, կամ ՄԻՊ աշխատակազմում ունենալ հատուկ մասնագիտացված բաժին, որը կզբաղվի միայն զինվորականների իրավունքների հետ ծագած խնդիրներով: Գործող օմբուդսմենը զբաղվում է մարդու բոլոր ունիվերսալ իրավունքներով, ինչը խոչընդոտում է բանակային գործերին արդյունավետ արձագանքելուն:

26. Պաշտպանության նախարարության քննչական բաժինը հարկավոր է հանել ՊՆ ենթակայությունից: Իրական են համարվում ռիսկերն այն բանի, որ պաշտպանության նախարարության ենթակա քննչական ծառայությունը չի կարող պաշտպանության նախարարության եւ/կամ ՊՆ համակարգի աշխատակիցների շահերի դեմ անաչառ քննություն վարել:

27. Պետք է իրականացվի մահացության դեպքերով պատշաճ քննություն:

28. Զինվորական գործերով դատավորներին հայտնած բացարկները հարկ է, որ քննվեն այլ դատավորների կողմից:

29. Հարկ է, որ առանց տուժողի ներկայության կամ գրավոր հրաժարման՝ դատական նիստեր չգումարվեն:

30. Հարկ է, որ նախաքննական մարմինը տուժողին ներկայացնի քրեական գործի պատճենը անկախ այն հանգամանքից՝ տուժողը դիմում ներկայացրել է, թե ոչ:

31. Զինվորական/բանակային մահվան գործերով ընդդատությունը սահմանել ըստ սպանվածի կամ մահացածի բնակության վայրի: Այս հարցը շատ էական է արդարադատության համար, հաշվի առնելով, որ ՀՀ-ն Ղարաբաղում նույնպես զորքեր ունի, եւ դա ոչ մի իրավապայմանագրային հիմքով չի կարգավորվում եւ անհասկանալի է, թե ով՝ ինչ իրավասության ներքո է քննում գործերը: Հայաստանի կենտրոնական եւ հյուսիսային մարզերից տուժող կողմի համար շատ դժվար է մասնակցել դատաքն-

Բանակում 1994թ. մայիսի 12-ից հետո մահացած զինվորականների տվյալների բազայի կազմման

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Համար ____, կազմող _____, «___» _____, 2012

1	Մահացած զինվորի անուն-հայրանուն-ազգանունը	
2	Մահացած զինվորի ծննդյան տվյալներ եւ վայրը.	
3	Զորակոչվելիս առողջական վիճակը.	
4	Վերջին բնակության հասցեն՝ որտեղից զորակոչվել է.	
5	Զորակոչման վայրը՝ որտեղից զորակոչվել է.	
6	Զորակոչման ամիս-ամսաթիվ-տարի.	
7	Զորակոչման ժամանակ ընտանիքի կազմը եւ սոցիալական վիճակը, ծնողների զբաղվածություն.	
8	Կրթությունը՝ զորակոչի ժամանակ.	
9	Զորամաս(եր)ի անվանում(ներ)ը, համար(ներ)ը, եթե կա(ն).	
10	Մահվան վայրը.	
11	Մահվան ժամանակը. ժամ, օր, ամիս, տարի.	
12	Մահվան պաշտոնական պատճառը.	
13	Մահվան պատճառը, ըստ տեղեկություն հաղորդողների, եթե տարբերվում է պաշտոնական վարկածից.	
14	Քրեական/դատական գործի մանրամասներ, եթե կան. մեղադրանք, քր. հոդվածներ, դատապարտվածներ եւ այլն.	
15	Ա. Մահվան փաստով մեղադրյալներ պիտի լինեի՞ն, եթե այո, ապա՝ ովքեր.	
16	Բ. Եթե մեղադրյալներ կան/կային, ի՞նչ հոդվածով են դատվել/դատվում:	
17	Գ. Կասկածյալների/մեղադրյալների՝ ռազմական ոստիկանությունում պահման ժամկետները.	
18	Դ. Արդյո՞ք ճիշտ մարդիկ են մեղադրվել	
19	Ե. Արդյո՞ք մեղադրանքը արդարացի էր, եթե՝ ոչ, ապա ի՞նչ մեղադրանք պիտի լիներ.	
20	Զ. Ի՞նչ անօրինականություններ են եղել, եթե այդպիսիք եղել են նախաքննության եւ դատաքննության ընթացքում.	
21	Ովքե՞ր են որպես փաստաբաններ ներգրավվել	
22	Ովքե՞ր են/եղել քննիչները	
23	Ովքե՞ր են/եղել դատավորները	
24	Ովքե՞ր են/եղել մեղադրող/վերահսկող դատախազները	
25	Արդյո՞ք գործով կասկածյալները շարունակել են կամ շարունակում են ծառայել բանակում, եթե այո՝ ինչքա՞ն ժամանակ:	
26	Ի՞նչ փոխհատուցում է ստացել/ստանում զոհվածի ընտանիքը, չափը, տեւողությունը, ի՞նչ իրավական հիմքով է ստանում փոխհատուցումը:	
27	Կից նյութեր՝ պատճենված, եթե կան.	
28	Մահացածի կենդանի լուսանկարներ, քանակը.	
29	Մահացածի լուսանկարներ՝ մահացած վիճակում, քանակը.	
30	Մահվան դեպքի, քննության եւ դատավարության հետ կապված ԶԼՄ-հրապարակումների պատճեններ կամ համացանցային հասցեներ:	
31	Այլ տեղեկություններ, որ կուզեին հաղորդել տեղյակները:	
32	Տեղեկությունների աղբյուրները (եթե հրապարակային են).	
33	Տեղեկատվության աղբյուրների կոնտակտային տվյալները (եթե հրապարակային են). հեռախոս, հասցե, E-mail	

Ծրագրի բյուջեն

Բյուջեի համառոտագիրը (ամերիկյան դոլարին համարժեք դրամ՝ ($), 12 ամսվա համար:

1. 2650 ($)՝ տեխնիկասարքավորումներ, համակարգիչներ:

2. 1800 ($)՝ գրասենյակային ծախսեր:

3. 7600 ($)՝ աշխատավարձեր. իրավաբան, օգնական, համակարգող, խմբագիր եւ այլն:

4. 2204 ($)՝ եկամտահարկեր աշխատավարձերից եւ սոցվճարներ:

5. 1500 ($)՝ Կապ, ինտերնետ, փոստ:

6. 4400 ($)՝ Տրանսպորտային, ուղեւորություններ Շիրակի մարզի բոլոր գյուղերը:

7. 1770 ($)՝ հեռուստատեսային եւ ռադիո հաղորդումներ:

8. Մոտ 6610 ($)՝միջոցառումների կազմակերպում Երեւանում, Վանաձորում, հուշամատյանի տպագրություն:

Դրամաշնորհը՝ ընդամենը 28.574 ամերիկյան դոլարին համարժեք դրամ:

«Ասպարեզ» ակումբի սեփական ներդրումը ծրագրում, դրամական արտահայտությամբ, կազմում է մոտ 2 մլն դրամ (տեխնիկասարքավորումներ, կամավորական աշխատանք եւ այլն):

Բյուջեի մանրամասներին ծանոթանալու համար դիմեք levon@asparez.am հասցեով կամ +374 91 821 363 հեռախոսահամարով, առավելագույնը 7 օրում տեղեկությունները կուղարկվեն հետաքրքրվողներին:

ԿՈՐՍՎԱԾ ՎԱՇՏԸ

«Պաշտպանենք զինվորների իրավունքները» ծրագիր

Շիրակի մարզ

Բանակում զինադադարից (1994թ. մայիսի 12) հետո մահացած, սպանված կամ ինքնասպանություն գործած զինվորների մատյան:

Այս գրքի լույս ընծայումը հնարավոր է դարձել իրականացնել Ժողովրդավարության ազգային հիմնադրամի դրամաշնորհային օժանդակությամբ: Այստեղ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին եւ հնարավոր է, որ չհամընկնեն ԺԱՀ-ի եւ իրականացնող կազմակերպության տեսակետներին: «Պաշտպանենք զինվորների իրավունքները» ծրագիրն իրականացնում է «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունը:
Հասցե. Հայաստան-3102, Գյումրի, Պուշկինի փ., 96:
Հեռախոս. +37131260522:
www.asparez.am; levon@asparez.am

This TV program was supported by a grant from the National Endowment for Democracy.
Opinions expressed herein are those of the authors and do not necessarily reflect the views of NED and implementing organization. Implementing organization is Journalists' Club "Asparez".
Address: 96 Poushkin Street, Gyumri, Armenia-3102.
Phone: +37131260522:
www.asparez.am; levon@asparez.am

Թուղթ. օֆսեթ N1, ծավալը 16 տպագրական մամուլ (64x45սմ),
տպաքանակը՝ 1000:
«Քաղաքի գրատուն» ՍՊԸ տպարան